ՀՀ ՏՄՊՊՀ

Հայաստանի Հանրապետության տնտեսական
մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով

2019



Բովանդակություն

5
Օգտագործված հապավումներ

8
ՀՀ ՏՄՊՊՀ նախագահի ուղերձը

10
1. ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը
1.1 ՀՀ ՏՄՊՊՀ կազմը
1.2 ՀՀ ՏՄՊՊՀ կառուցվածքը
1.3 Մակրոտնտեսական ցուցանիշներ
1.4 Մրցակցության ազդեցությունը տնտեսության վրա

22
2. Մրցակցության պաշտպանություն
2.1 Հակամրցակցային համաձայնություններ
2.2 Գերիշխող դիրքի չարաշահում
2.3 Համակենտրոնացում
2.4 Անբարեխիղճ մրցակցություն
2.5 Պետական օժանդակության վերահսկողություն և պետական մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց հակամրցակցային գործողությունների կամ վարքագծի արգելում
2.6 2019 թվականին ավարտված վարչական վարույթները՝ ըստ ոլորտների

46
3. Ապրանքային շուկաների ուսումնասիրություն
3.1 «Կարագ» ապրանքային շուկայի ուսումնասիրություն
3.2 «Շաքարավազ» ապրանքային շուկայի ուսումնասիրություն
3.3 «Բենզին» և «Դիզելային վառելիք» ապրանքային շուկաների ուսումնասիրություն
3.4 «Սեղմված գազ» ապրանքային շուկայի ուսումնասիրություն
3.5 Կոնյակի շրջանառության ոլորտի ուսումնասիրություն

68
4. Օրենսդրական աշխատանքներ
4.1 Օրենսդրական բարեփոխումներ
4.2 Միջազգային օրենսդրություն
4.3 Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենսդրության համապատասխանության վերաբերյալ եզրակացությունների տրամադրումը

75
5. Հանրային իրազեկում
5.1 Տեղեկատվական և կրթական գործառույթներ

78
6. Համագործակցությունն այլ մարմինների հետ

78
7. Միջազգային համագործակցություն
7.1 Բազմակողմ համագործակցություն
7.2 Երկկողմ համագործակցություն

88
8. ՀՀ ՏՄՊՊՀ 2020 թվականի առաջնահերթությունները

90
9. 2019 թվականի տարեկան ֆինանսատնտեսական գործունեություն

92
Հավելված. 2019 թվականի վարչական վարույթներ

ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով

Gegham Gevorgyan / Գեղամ Գևորգյան

+374 10 54 19 00

www.competition.am

info@competition.am

ՀՀ ՏՄՊՊՀ

Բովանդակություն

Օգտագործված հապավումներ

ԱԳԼԿ	Ավտոմոբիլային գազալիցքավորման կայան
ԱԳԼՃԿ	Ավտոմոբիլային գազալիցքավորման ճնշումային կայան
ԱՀ ՀԾՏՄԿՊՀ	Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողով
ԱՁ	Անհատ ձեռնարկատեր
ԱՄՀ	Արժույթի միջազգային հիմնադրամ
ԱՊՀ ՀՔՄԽ	Անկախ պետությունների համագործակցության Հակամենաշնորհային քաղաքականության միջպետական խորհուրդ
ԲԲԸ	Բաց բաժնետիրական ընկերություն
ԲՈՒՀ	Բարձրագույն ուսումնական հաստատություն
ԵԱՏՄ	Եվրասիական տնտեսական միություն
ԵՄ	Եվրոպական միություն
ԵՏՀ	Եվրասիական տնտեսական հանձնաժողով
ԶԼՄ	Զանգվածային լրատվության միջոց
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՀ ՏՄՊՊՀ	Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՀՏՖ	Համաշխարհային տնտեսական ֆորում
ՄԱԿ ՄԱԱԶՀ	Միացյալ ազգերի կազմակերպության առևտրի և զարգացման հարցերով համաժողով
ՄՀԶ	Մրցունակության համաշխարհային զեկույց
ՄՄՑ	Մրցակցության միջազգային ցանց
ՊԵԿ	Պետական եկամուտների կոմիտե
ՌԴ	Ռուսաստանի Դաշնություն
ՍԱՊԾ	Սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն
ՍՊԸ	Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
ՎԶԵԲ	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
ՓԲԸ	Փակ բաժնետիրական ընկերություն

Տնտեսական մրցակցությունը տնտեսության զարգացման շարժիչ ուժն է, տնտեսական մրցակցության պաշտպանությունը՝ շուկայում անբարեխիղճ երևույթների բացառման երաշխիքը,

ուսրի զարգացած բոլոր տնտեսություններում և իրավական համակարգերում տնտեսական մրցակցությունը երաշխավորվում է բարձրագույն ուժ ունեցող օրենսդրական ակտերով, իսկ դրա պաշտպանության համար ստեղծվում են պետական մեխանիզմներ:

2019 թվականն անցումային տարի էր մեզ համար. ձևավորվեց ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի նոր կազմը, փոխվեց հանձնաժողովի կարգավիճակը:

Հանձնաժողովի նախագահի պաշտոնը ստանձնելու առաջին իսկ օրվանից ինձ համար առաջնահերթություն է եղել համագործակցության միջոցով հանձնաժողովի հանդեպ վստահության ամրապնդումը: Վստահություն՝ հանձնաժողովի և տնտեսվարողների ու սպառողների միջև, վստահություն՝ հանձնաժողովի և տնտեսական մրցակությամբ զբաղվող իրավաբանական համայնքի միջև, վստահություն՝ հանձնաժողովի և միջազգային գործընկերների, ինչպես նաև պետական կառավարման համակարգի մարմինների միջև, որոնք ապավինում են մեր մասնագիտական կարողություններին, որպեսզի մշակենք և կատարելագործենք ազատ մրցակցության կարգավորումներ, որոնք կծառայեն մեր երկրին այսօր և ապագայում:

Սպառողների շահերի պաշտպանության և շուկաներում տնտեսական մրցակցության առաջընթացը գնահատելու նպատակով պետք է պատասխանենք հետևյալ հարցին. արդյո՞ք կարողացանք մրցակցային միջավայրը բարելավել 2019 թվականին: Կարծում եմ՝ այո:

2019 թվականին ունեցել ենք գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնությունների վերաբերյալ վարույթների էական աճ, որոնք առնչվում են պետական գնումներին, պարենային և ոչ պարենային առաջնահերթ ապրանքների շրջանառության ոլորտներին:

Հաշվետու ժամանակահատվածում հանձնաժողովն իր ուշադրությունը սևեռել է բիզնես ոլորտում պետական մարմինների անհարկի միջամտությունների հնարավոր դեպքերի բացահայտման ու կանխարգելման աշխատանքներին: Պետական մարմինների հակամրցակցային գործողությունների վերաբերյալ 5 վարույթ ենք ունեցել, ինչը, կարծում եմ, կարևոր ազդակ է բիզնես հանրությանը հանձնաժողովի՝ որպես

ինքնավար մարմնի նկատմամբ վստահության ստեղծման հարցում:

Էականորեն աճել են անբարեխիղճ մրցակցության վերաբերյալ տնտեսվարող սուբյեկտների դիմումների ներկայացման դեպքերը: Հատկանշական է, որ վարույթների զգալի մասը հարուցվել է հենց տնտեսվարողների դիմումների հիման վրա, ինչը ևս վստահության չափանիշ է: Անբարեխիղճ մրցակցության դեմ պայքարում մենք որդեգրել ենք «չվնասելու» սկզբունքը՝ նախապատվություն տալով առավելապես կանխարգելիչ մեթոդների կիրառմանը:

Այս ընթացքում մենք նաև մեր մասնագիտական հայացքն ուղղել ենք դեպի ապագան՝ հետևելով թվային տնտեսությունների զարգացումներին և նորարարություններին: Համոզված եմ՝ պետք է շարունակենք իրականացնել ապագայի զարգացումներին ուղղված վերլուծություններ նաև հետագա տարիներին՝ նպատակ ունենալով բացահայտել բիզնես աշխարհի զարգացման նոր միտումների և տեխնոլոգիաների ազդեցությունները մրցակցության վրա և ուրվագծել թվային աշխարհում հայկական ընկերությունների ապագայի տեսլականը:

Միևնույն ժամանակ 2019 թվականը նաև ինստիտուցիոնալ փոփոխությունների տարի էր: Հանձնաժողովում տեղի ունեցան տնտեսական մրցակցության ժամանակակից մարտահրավերներին համահունչ կառուցվածքային փոփոխություններ, մեր թիմը համալրվեց նոր մասնագետներով:

Կարծում եմ՝ կառույցը կարող է հաջողակ լինել, եթե ունի մոտիվացված և նվիրված անձնակազմ: Մեր աշխատակիցները 2019 թվականին իրապես լավ աշխատանք են կատարել, և ես հպարտ եմ նրանցով:

Մենք բաց ենք նոր գաղափարների, նոր առաջարկների համար՝ համատեղ աշխատանքով ամեն տարի ավելի լավ տնտեսական միջավայր և զարգացման ճանապարհին նոր ձեռքբերումներ արձանագրող երկիր ունենալու նպատակով:

Գեղամ Գևորգյան

ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի նախագահ

1. ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը ստեղծվել է 2001 թվականին «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի[1] հիման վրա: ՀՀ ՏՄՊՊՀ-ն տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառում պետական քաղաքականություն իրականացնող ինքնավար մարմին է: Հաշվետու տարում Հայաստանի տնտեսական աճն ուղեկցվել է տնտեսության ճյուղային կառուցվածքի բարելավմամբ, ցածր գնաճով, ֆինանսական կայուն ցուցանիշներով:

1 *Օրենքն ընդունվել է 2000 թվականի նոյեմբերի 6-ին:*

Նպատակը

- Պաշտպանել և խրախուսել **ազատ տնտեսական մրցակցությունը**
- Նպաստել **ձեռնարկատիրության վարգացմանը** և **սպառողների շահերի պաշտպանությանը**
- Ապահովել **բարեխիղճ մրցակցության** համար անհրաժեշտ միջավայր

Խնդիրները

- Ձեռնարկատիրության վարգացման և սպառողների շահերի պաշտպանության նպատակով **տնտեսական մրցակցության պաշտպանում ու խրախուսում**
- **Բարեխիղճ և ազատ մրցակցության** համար անհրաժեշտ միջավայրի ապահովում
- **Հակամրցակցային գործունեության կանխարգելում**, սահմանափակում և նախազգուշացում
- **Տնտեսական մրցակցության պաշտպանության** նկատմամբ վերահսկողություն

Գործիքակազմը

- **Հակամրցակցային համաձայնությունների բացահայտում** և պատասխանատվության միջոցի կիրառում
- **Մենաշնորհի կամ գերիշխող դիրքի չարաշահումների** բացահայտում և պատասխանատվության միջոցի կիրառում
- Պետական մարմինների կողմից **տնտեսական մրցակցությունը խաթարող երևույթների** բացահայտում և պատասխանատվության կիրառում
- **Պետական օժանդակության** նկատմամբ վերահսկողություն
- **Համակենտրոնացումների** նկատմամբ վերահսկողություն
- **Անբարեխիղճ մրցակցության** երևույթների բացահայտում և պատասխանատվության միջոցի կիրառում

Բովանդակություն

ՀՀ ՏՄՊՊՀ կազմը

Նախագահ

Ղեկավարում և համակարգում է հանձնաժողովի բնականոն գործունեությունը, այդ նպատակով հանձնաժողովի անդամներին և իր կողմից նշանակվող աշխատողներին տալիս է հանձնարարականներ, կատարում է աշխատանքային պարտականությունների բաշխում հանձնաժողովի անդամների միջև, պատասխանատու է հանձնաժողովի առջև դրված խնդիրների ու գործառույթների իրականացման համար։

Գեղամ Գևորգյան

Անդամներ

Անկախ են և գործում են ՀՀ Սահմանադրությանը, օրենքներին, այլ իրավական ակտերին համապատասխան, իրենց վերապահված լիազորությունների շրջանակում համակարգում են առանձին կառուցվածքային ստորաբաժանումների գործունեությունը, տալիս են հանձնարարականներ և դրանց կատարման նկատմամբ իրականացնում հսկողություն, ապահովում են հանձնաժողովի նախագահի հանձնարարականների իրականացումը, հանձնաժողովի անունից ստորագրում պաշտոնական փաստաթղթեր։

Հայկ Կարապետյան

Տիգրան Մարկոսյան

Վահե Չիբուխչյան

Արեն Դանիելյան

Էդգար Ճաղարյան

Կարեն Սեդրակյան

ՀՀ ՏՄՊՊՀ կառուցվածքը

ՀՀ ՏՄՊՊՀ թիմը նոր մասնագետներով համալրելու, աշխատակիցների աշխատանքային կարողություններն ու մասնագիտական հմտությունները զարգացնելու, մասնագիտական աճ ապահովելու, ինչպես նաև ամենօրյա աշխատանքներն առավել օպերատիվ և արդյունավետ դարձնելու նպատակով 2019 թվականին հանձնաժողովն իրականացրել է կառուցվածքային բարեփոխումներ. ստեղծվել են նոր ստորաբաժանումներ, ավելացել են հաստիքային միավորներ, վերաբաշխվել են պարտականությունները, ինչի արդյունքում աշխատանքները դարձել են առավել հստակ, ընդգրկուն և նպատակային:





Բովանդակություն

ՀՀ ՏՄՊՊՀ աշխատակիցների շարժը 2019 թվականի ընթացքում

2019 թվականի ընթացքում ՀՀ ՏՄՊՊՀ թիմին միացել է 19 աշխատակից, հեռացել՝ 23-ը: Հանձնաժողովն ունի 76 հաստիքային միավոր:





Մակրոտնտեսական ցուցանիշներ

2019 թվականը Հայաստանի Հանրապետության համար տնտեսական առումով բարենպաստ տարի էր: Ամենամեծ տնտեսական աճը 2008 թվականից հետո արձանագրվել է 2019 թվականին: Բացարձակ թվով ՀՆԱ-ն 2019 թվականին կազմել է 6 տրլն 551 մլրդ 849 մլն դրամ, ինչը 7.6%-ով ավել է 2018 թվականի ցուցանիշից, և ամենաբարձրն է ԵԱՏՄ անդամ երկրների, հարևան բոլոր երկրների և եվրոպական տարածաշրջանի երկրների համեմատ:
Աճել է նաև ապրանքների արտահանման, առևտրի շրջանառության, ծառայությունների ծավալը, ինչպես նաև շինարարությունը:

Համախառն ներքին արդյունք, շուկայական գներ (Դ/մլրդ)



Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական կոմիտե

Մշակող արդյունաբերությունում 2019 թվականին տնտեսական աճը կազմել է 12%՝ 2008 թվականից հետո առաջին անգամ ՀՆԱ-ի կառուցվածքում 12.1% կշռով դառնալով տնտեսության առաջատար ճյուղը:

Հաշվետու ժամանակահատվածում ամենաբարձր տնտեսական աճն արձանագրել է կացության և հանրային սննդի ծառայություններ ոլորտը՝ նախորդ տարվա համեմատ աճելով 27.2%-ով, ինչը 2019 թվականի ընթացքում Հայաստան այցելած զբոսաշրջիկների թվի 14.7%-ով աճի կարևոր արտահայտություններից է:

Հայաստանից ապրանքների և ծառայությունների արտահանումը 2019 թվականի արդյունքներով աճել է 10.3%-ով:

Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության ոլորտում 2019 թվականին գրանցվել է շրջանառության շուրջ 30% աճ, որը ներառում է համակարգչային ծրագրավորման, ինչպես նաև էլեկտրոնիկայի, միկրոէլեկտրոնիկայի և այլ բարձր տեխնոլոգիական ուղղություններ:

2019 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին օտարերկրյա ներդրումների ներհոսքը կազմել է 2.2 մլրդ դոլար, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավել է 465 մլն դոլարով կամ 27.2%-ով, իսկ 2017 թվականի համեմատ՝ 635 մլն դոլարով կամ 41.3%-ով:

2018-2019 թվականների ընթացքում պետական բյուջեի հարկային եկամուտների հայտարարագրման ցուցանիշն ավելացել է 505.4 մլրդ դրամով կամ 43.6%-ով, ինչը հնարավորություն է ընձեռել 199.1 մլրդ դրամով նվազեցնելու հարկ վճարողների հանդեպ նախկինում ձևավորված պարտքերը և 306.3 մլրդ դրամով փաստացի ավելացնելու պետական բյուջեի հարկային եկամուտները: 2019 թվականին հարկեր/ՀՆԱ հարաբերակցության ցուցանիշը կազմել է 22.35%՝ նախորդ տարվա ցուցանիշի (20.95%) համեմատ բարելավվելով 1.38 տոկոսային կետով, ինչն այլ հավասար պայմաններում համարժեք է 90.7 մլրդ դրամ լրացուցիչ հարկային եկամուտների գոյացմանը:

2019 թվականի արդյունքներով առաջին 1000 խոշոր հարկ վճարողների վճարած հարկերի ծավալը նախորդ տարվա համեմատ ավելացել է 13%-ով, իսկ 2017 թվականի համեմատ՝ 31%-ով: 2018 թվականի մայիսից մինչև 2019 թվականի ավարտ հավելյալ ի հայտ է եկել (ստեղծվել է և ստվերից դուրս է բերվել) ավելի քան 87 հազար աշխատատեղ:

Միջազգային վարկանիշային գործակալություններն արձանագրված տնտեսական ցուցանիշների և վարվող ոլորտային քաղաքականությունների գնահատման արդյունքում բարձրացրել են Հայաստանի սուվերեն վարկանիշը, մասնավորապես, «Ֆիթչ»-ը այն բարձրացրել է «BB-», իսկ «Մուդիզ»-ը՝ «Ba3» մակարդակի[2]:

2 *Տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կառավարություն:*

Մրցակցության ազդեցությունը տնտեսության վրա

Տնտեսության զարգացման կարևորագույն նախադրյալներից է տարբեր ոլորտներում մրցակցության բարձր մակարդակի ապահովումը: Յուրաքանչյուր երկրի տնտեսական քաղաքականության առանցքային ուղղությունը պետք է լինի առողջ և ազատ մրցակցային միջավայրի ձևավորմանը միտված քաղաքականության իրականացումը, քանի որ հենց ազատ մրցակցությունն է, որ հանդիսանում է տնտեսական համակարգի արդյունավետ կենսագործման առաջնային պայման, նպաստում գիտատեխնիկական առաջընթացին, նոր արտադրատեսակների ներդրմանը, ռեսուրսների արդյունավետ օգտագործմանն ու արտադրական ծախսերի կրճատմանը, արտադրանքի որակի շարունակական բարելավմանը, գնագոյացման արդարացի մեխանիզմների հաստատմանն ու տնտեսական ներուժի հզորացմանը:

Մրցակցությունը ստիպում է գործարարներին փորձել արտադրել առավել որակով արտադրանք առավել ցածր գնով, ինչը, իր հերթին, հանգեցնում է տեխնոլոգիական առաջընթացին, հումքի խնայողությանը, ապրանքների բաշխման ուղիների օպտիմալիզացմանը:

«Համաշխարհային տնտեսական ֆորում» կազմակերպության Մրցունակության համաշխարհային ամենամյա զեկույցի համաձայն՝ 2019 թվականին Հայաստանն իր մրցունակությամբ 69-րդն է աշխարհի 141 երկրների մեջ:

Համաշխարհային մրցունակության զեկույցում երկրների մրցունակությունը գնահատվում է ՀՏՖ-ի մշակած Համաշխարհային մրցունակության ցուցիչի[3] միջոցով և հաշվարկվում է մրցունակության 12 հենասյուների հիման վրա:

Գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտների ազդեցության ցուցանիշով Հայաստանը զբաղեցնում է 24-րդ հորիզոնականը:

Հայաստանում և մի շարք երկրներում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների ազդեցության ցուցանիշի համեմատականը 2019 թվականի ընթացքում



3 Ցուցիչի հաշվարկման հիմքում ընկած են վիճակագրական տվյալներ և ընկերությունների ղեկավարների հարցման արդյունքները: Ընկերությունների ղեկավարների ամենամյա հարցումն իրականացվում է ՄՀԶ-ում ներառված երկրներում ՀՏՖ Նոր տնտեսության և հասարակության կենտրոնի գործընկեր կազմակերպությունների կողմից:

Մրցակցության վրա հարկերի ու սուբսիդիաների խաթարող ազդեցության ցուցանիշի գծով Հայաստանը 2018 թվականի 47-րդ հորիզոնականի համեմատ 2019 թվականին բարելավել է իր դիրքը՝ զբաղեցնելով 35-րդ հորիզոնականը:

Հայաստանում և մի շարք երկրներում մրցակցության վրա հարկերի ու սուբսիդիաների խաթարող ազդեցության ցուցանիշի դինամիկան 2018-2019 թվականների ընթացքում



Ծառայությունների ոլորտում մրցակցության մակարդակի ցուցանիշի գծով Հայաստանը ևս նշանակալի բարելավել է իր դիրքը՝ 2019 թվականի ընթացքում զբաղեցնելով 19-րդ հորիզոնականը՝ 2018 թվականի 41-րդ հորիզոնականի համեմատ:

Հայաստանում և մի շարք երկրներում ծառայությունների ոլորտում մրցակցության մակարդակի ցուցանիշի դինամիկան 2018-2019 թվականների ընթացքում



Միջազգային մասնագիտացված կազմակերպությունների միջազգային տնտեսությունների մրցունակությունը չափող և համեմատող միջազգային զեկույցներն ու գնահատականները կարևոր նշանակություն ունեն տարբեր երկրներում տնտեսական մրցակցության քաղաքականությամբ և մրցակցության պաշտպանությամբ զբաղվող պետական լիազոր մարմինների համար, որոնք, հիմնվելով այդ ուսումնասիրությունների արդյունքների և գնահատականների վրա, իրականացնում են համապատասխան վերլուծություններ և անհրաժեշտության դեպքում ձեռնարկում են քայլեր՝ իրենց գործունեության արդյունավետության բարձրացման և շուկաներում մրցակցային միջավայրի բարելավման ուղղությամբ:

Մրցակցային մարմինների ազդեցությունը տնտեսության վրա

Մրցակցային մարմինները նշանակալի ազդեցություն են ունենում տնտեսության վրա մրցակցության օրենսդրության կիրառման և որոշումների կայացման տեսանկյունից: Նրանց՝ իրազեկմանն ու շահերի պաշտպանությանն ուղղված գործողությունները տարածվում են ազդակիր շուկաների և սպառողների, ինչպես նաև մակրոտնտեսական ցուցանիշների վրա:

Ուղղակիորեն դժվար է չափել, թե որքան է մրցակցության ազդեցությունը տնտեսական աճի վրա, սակայն այն կարելի է ներկայացնել հետևյալ գծապատկերով՝



2. Մրցակցության պաշտպանություն

2019 թվականի վարչական վարույթներ

● Պատասխանատվության միջոցներ ● Համակենտրոնացումների համար տրված թույլտվություններ ○ Կարճված վարույթներ

	2019 թվականի վարչական վարույթները	Լսված և ավարտված վարույթներ	Պատասխանատվության միջոցներ	Համակենտրոնացումների համար տրված թույլտվություններ	Կարճված վարույթներ	Ընթացիկ վարույթներ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ)
Հակամրցակցային համաձայնություն	2	1 ○	0		1	1
Գերիշխող դիրքի չարաշահում	20	14 ●●●●●○○○○○○○○○	1		13	6
Համակենտրոնացման հայտարարագրում	30	29 ●●●●●●●●●●○○○○○○○○○○		27	2	1
Չհայտարարագրված համակենտրոնացում	8	7 ●●●●●●●	7			1
Անբարեխիղճ մրցակցություն	57	33 ●●●●●●●●●●●●●●●●●●●●●●●●●●●●●●●●●○○○○○○○○○○○○○○○○	19		14	24
Պետական մարմինների հակամրցակցային գործողություններ	6	6 ●●●●●●	1		5	
Տեղեկատվության չտրամադրում կամ ժամկետից ուշ տրամադրում	22	21 ●●●●●●●●●●●●●●●●●●●●●	21			1

Բովանդակություն

2018 թվականի վարչական վարույթներ

● Պատասխանատվության միջոցներ ● Համակենտրոնացումների համար տրված թույլտվություններ ○ Կարճված վարույթներ

	Լսված և ավարտված վարույթներ	Պատասխանատվության միջոցներ	Համակենտրոնացումների համար տրված թույլտվություններ	Կարճված վարույթներ
Հակամրցակցային համաձայնություն	0	0		
Գերիշխող դիրքի չարաշահում	3	2		1
Համակենտրոնացման հայտարարագրում	25		23	2
Չհայտարարագրված համակենտրոնացում	7	7		
Անբարեխիղճ մրցակցություն	35	33		2
Պետական մարմինների հակամրցակցային գործողություններ	0	0		
Տեղեկատվության չտրամադրում կամ ժամկետից ուշ տրամադրում	12	12		

Բովանդակություն

2017 թվականի վարչական վարույթներ

● Պատասխանատվության միջոցներ ● Համակենտրոնացումների համար տրված թույլտվություններ ○ Կարճված վարույթներ

	Լսված և ավարտված վարույթներ	Պատասխանատվության միջոցներ	Համակենտրոնացումների համար տրված թույլտվություններ	Կարճված վարույթներ
Հակամրցակցային համաձայնություն	0	0		
Գերիշխող դիրքի չարաշահում	5 ●○	3		2
Համակենտրոնացման հայտարարագրում	43 ●●●●●●●●●●●●●●●●●●●●●○		42	1
Չհայտարարագրված համակենտրոնացում	23 ●●●●●●●●●●●●●●●●●●●●	23		
Անբարեխիղճ մրցակցություն	55 ●●●●●●●●●●●●●●●●●●●

2017–2019 թթ. վարչական վարույթներ



Բովանդակություն

Հակամրցակցային համաձայնություններ

Հակամրցակցային համաձայնություններ են համարվում տնտեսվարող սուբյեկտների միջև կնքված այն գործարքները, նրանց համաձայնությունները, ուղղակի կամ անուղղակի համաձայնեցված գործողությունները կամ վարքագիծը, տնտեսվարող սուբյեկտների միավորումների ընդունած որոշումները, որոնք ուղղակի կամ անուղղակի հանգեցնում կամ կարող են հանգեցնել մրցակցության սահմանափակմանը, կանխմանը կամ արգելմանը՝ բացառությամբ Օրենքով սահմանված դեպքերի:

Հակամրցակցային համաձայնությունների օրինակներ են՝

- *շուկան կամ մատակարարման աղբյուրները բաշխելը կամ բաժանելը,*
- *այլ բիզնեսների շուկա մուտք գործելուն խոչընդոտելը կամ շուկայից նրանց դուրս մղելը,*
- *ապրանքների գների չհիմնավորված բարձրացնելը, իջեցնելը կամ պահպանելը,*
- *իրացման կամ ձեռքբերման գների, դրույքաչափերի, զեղչերի, արտոնությունների համաձայնեցված սահմանելը, փոփոխելը կամ պահպանելը,*
- *ի վնաս սպառողի շահերի՝ ապրանքների քանակը շուկայում կրճատելու կամ ապրանքները պահելու, փչացնելու, ոչնչացնելու միջոցով ապրանքային շուկայում պակասուրդ ստեղծելը,*
- *միևնույն ապրանքի համար անհավասար պայմաններ առաջարկելը կամ կիրառելը,*
- *մրցույթների պայմանների վերաբերյալ պայմանավորվածությունը կամ արդյունքների կեղծելը և այլն:*

Նշված իրավախախտումները դիտարկվում են որպես տնտեսական մրցակցությանն առավել մեծ վնաս հասցնող դրսևորումներ, այդ իսկ պատճառով դրանց արգելման պահանջն ամրագրված է նաև ՀՀ Սահմանադրության 59-րդ հոդվածի 3-րդ մասով:

2019 թվականին հնարավոր հակամրցակցային համաձայնության վերաբերյալ հարուցվել է 2 վարչական վարույթ, որից 1-ը կարճվել է, 1-ը հաշվետու ժամանակահատվածի ավարտին եղել է ընթացիկ:

2017	2018	**2019**
ՎԱՐՈՒՅԹՆԵՐ		
0	**0**	**2**

Պետական գնումները՝ ՀՀ ՏՄՊՊՀ ուշադրության կենտրոնում

Գնման ընթացակարգերում առավել հաճախ են հանդիպում պայմանավորվածություններ: Թերևս ամենաակնառու և հաճախ հանդիպող խնդիրը տեխնիկական բնութագրերում ուղղորդող, հղումներ պարունակող, կոնկրետ ապրանքը բնութագրող հատկանիշների առկայությունն է, ինչի հետևանքով սահմանափակվում է մրցակցությունը, քանի որ տեխնիկական բնութագրերի պահանջներին փաստացի բավարարում են խիստ սահմանափակ թվով սուբյեկտների առաջարկած ապրանքները (աշխատանքները, ծառայությունները), որպիսի պարագայում շուկայի մասնակիցների համար ստեղծվում են շուկայում հավասար պայմաններով գործունեություն ծավալելու արհեստական խոչընդոտներ: Մասնավորապես, նմանատիպ բողոքներ հանձնաժողովը ստացել է ՀՀ էկոնոմիկայի, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, ՀՀ առողջապահության նախարարությունների և դրանց ենթակայությամբ գործող կազմակերպությունների, ՀՀ ոստիկանության, ՀՀ դատական դեպարտամենտի, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ պատվիրատուների հայտարարած մրցույթների վերաբերյալ:

Հանձնաժողովը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից ստացված բողոքի հիման վրա ուսումնասիրություն է իրականացրել էլեկտրոնային աճուրդների իրականացման ոլորտում: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ աճուրդներն ընթացել են ոչ մրցակցային պայմաններում, քանի որ դրանց ընթացքում տեղի չի ունեցել գների սակարկման գործընթաց, և պետական մարմինները զրկվել են ապրանքներն ավելի ցածր գնով ձեռք բերելու հնարավորությունից:

Հանձնաժողովը ՀՀ ֆինանսների նախարարությանն առաջարկել է էլեկտրոնային աճուրդի միջոցով իրականացվող գնումները կարգավորող իրավական ակտերում կատարել այնպիսի օրենսդրական փոփոխություններ, որոնք հնարավորություն կտան աճուրդներն անցկացնել մրցակցային պայմաններում և կբացառեն աճուրդի մասնակիցների՝ գների սակարկման գործընթացին մասնակցելու խոչընդոտները:

Հանձնաժողովը ՀՀ պետական վերահսկողական ծառայությունից ստացված գրության հիման վրա իրականացրել է ուսումնասիրություն դիալիզի պարագաների գնման նպատակով կազմակերպված մի շարք գնման ընթացակարգերում տեխնիկական բնութագրերի ոչ մրցակցային պայմաններով կազմման վերաբերյալ:

Ուսումնասիրության արդյունքում հանձնաժողովը մշակել է դիալիզի պարագաների մի շարք կարևոր չափորոշիչներին ներկայացվող այն հիմնական տեխնիկական պահանջները, որոնք պետական գնումների շրջանակներում պատվիրատու հաստատությունները կարող են կիրառել մրցույթների հրավերները կազմելիս: Այդ կապակցությամբ հանձնաժողովն առաջարկություն է ներկայացրել ՀՀ առողջապահության նախարարությանը վերոնշյալ տեխնիկական չափորոշիչները գործնականում կիրառելու վերաբերյալ:

Հանձնաժողովն իրականացրել է ուսումնասիրություն ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունից ստացված բողոքի հիման վրա: Ըստ բողոքի՝ նախարարության հայտարարած մի շարք մրցույթներին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ են ներկայացրել նաև «Արմստրոյ», «Գլոբալ Ինժեներ» ՍՊԸ-ները և ԱՁ «Լարիսա Նալբանդյան»-ը, որոնց ներկայացրած լիցենզիաների մեջ որպես մասնագետ նշված է եղել միևնույն անձը, իսկ ներկայացված գնային առաջարկների նախնական ուսումնասիրության ընթացքում նախարարությունը կասկած է ունեցել տնտեսվարող սուբյեկտների միջև հակամրցակցային համաձայնության առկայության վերաբերյալ:

Հանձնաժողովի իրականացրած ուսումնասիրության արդյունքում Օրենքի խախտումներ չեն հայտնաբերվել:

Գերիշխող դիրքի չարաշահում

Տնտեսվարող սուբյեկտն ապրանքային շուկայում համարվում է գերիշխող դիրք ունեցող, եթե՝

- *տվյալ ապրանքային շուկայում ունի շուկայական իշխանություն և իր ֆինանսական կարողությունից ելնելով՝ հնարավորություն ունի որոշիչ ազդեցություն ունենալու տվյալ ապրանքային շուկայում ապրանքների շրջանառության ընդհանուր պայմանների վրա և (կամ) դուրս մղելու այլ տնտեսվարող սուբյեկտին տվյալ ապրանքային շուկայից և (կամ) խոչընդոտելու տվյալ ապրանքային շուկա մուտք գործելուն,*
- *իրացման ծավալներով գրավում է տվյալ շուկայի առնվազն 1/3-ը, կամ ապրանքային շուկայում իրացման առավել մեծ ծավալներ ունեցող 2 տնտեսվարող սուբյեկտներից յուրաքանչյուրը տվյալ ապրանքային շուկայում համարվում է գերիշխող դիրք ունեցող, եթե նրանք իրացման ծավալներով միասին գրավում են տվյալ շուկայի առնվազն 1/2-ը, կամ ապրանքային շուկայում իրացման առավել մեծ ծավալներ ունեցող 3 տնտեսվարող սուբյեկտներից յուրաքանչյուրը տվյալ ապրանքային շուկայում համարվում է գերիշխող դիրք ունեցող, եթե նրանք իրացման ծավալներով միասին գրավում են տվյալ շուկայի առնվազն 2/3-ը:*

Գերիշխող դիրքի չարաշահման օրինակներ են՝

- *իրացման չհիմնավորված, խտրական գների սահմանումը կամ կիրառումը,*
- *այլ բիզնեսի առևտրի կամ արտադրության արդիականացման կամ ներդրումների սահմանափակումը,*
- *ի վնաս սպառողի շահերի՝ ապրանքների ներկրման կամ արտադրության չհիմնավորված կրճատումը կամ ապրանքները պահելու, փչացնելու, ոչնչացնելու միջոցով ապրանքային շուկայում պակասուրդի ստեղծումը կամ պահպանումը,*
- *այլ բիզնեսների կամ սպառողների նկատմամբ խտրական պայմանների կիրառումը,*
- *պայմանագրի կողմին լրացուցիչ պարտավորությունների պարտադրումը, որոնք իրենց բնույթով կամ իրականացման տեսանկյունից չեն առնչվում պայմանագրի բուն առարկայի հետ,*
- *բիզնեսների վերակազմակերպման կամ տնտեսական կապերի հզման պարտադրումը,*
- *այլ բիզնեսի շուկա մուտք գործելուն խոչընդոտելու կամ շուկայից նրան դուրս մղելու գործողությունը կամ վարքագիծը,*
- *այնպիսի պայմանների առաջարկը կամ կիրառումը, որոնք առաջացնում են մրցակցային անհավասար պայմաններ այն դեպքում, երբ համանման պայմաններ չեն առաջարկվել տվյալ ապրանքային շուկայում գործող մյուս տնտեսվարող սուբյեկտներին,*
- *ապրանքի գնի չհիմնավորված բարձրացումը, իջեցումը կամ պահպանումը:*

Թունաքիմիկատների շրջանառության բնագավառում հանձնաժողովի իրականացրած ուսումնասիրության արդյունքում «Ֆունգիցիդներ» ապրանքային շուկայում գերիշխող դիրք զբաղեցնող «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի 2018 թվա-

2019 թվականին հնարավոր գերիշխող դիրքի չարաշահման վերաբերյալ հարուցվել է 20 վարչական վարույթ, որից 6-ը հաշվետու ժամանակահատվածի ավարտին եղել է ընթացիկ: Կիրառվել է 1 պատասխանատվության միջոց:

	2017	2018	2019
ՎԱՐՈՒՅԹՆԵՐ	5	3	**20**
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ	3	2	**1**

կանի առաջին կիսամյակի ընթացքում կատարած գնային բարձրացումը որակվել է որպես գերիշխող դիրքի չարաշահում (գնի չհիմնավորված բարձրացում), և ընկերության նկատմամբ կիրառվել է պատասխանատվության միջոց[4]:

Հանձնաժողովի 2019 թվականին «Շաքարավազ» ապրանքային շուկայում իրականացրած ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ շաքարավազի մանրածախ և մեծածախ իրացման ոլորտներում մի շարք տնտեսվարող սուբյեկտների վարած գնային քաղաքականությունը, ինչպես նաև ապրանքային շուկայում ապրանքների շրջանառության ընդհանուր պայմանների վրա ազդեցությունը կարող է պարունակել Օրենքի հնարավոր խախտումների, մասնավորապես՝ տնտեսվարող սուբյեկտների գերիշխող դիրքի հնարավոր չարաշահման և (կամ) հակամրցակցային համաձայնության (չհիմնավորված կամ խտրական գների սահմանման և կիրառման, գների չհիմնավորված փոփոխությունների կամ պահպանման) հատկանիշներ: Հիմնվելով ուսումնասիրության արդյունքների վրա՝ հանձնաժողովը որոշում է կայացրել մի շարք տնտեսվարող սուբյեկտների՝ Օրենքի հնարավոր խախտումների վերաբերյալ հարուցել վարչական վարույթ:

Նույնը պարզվել է նաև «Կարագ» ապրանքային շուկայում իրականացված ուսումնասիրության արդյունքում և հանձնաժողովը որոշում է կայացրել «Ալեքս Հոլդինգ», «Ալեքս էնդ Հոլդինգ» և «Սիթի» ՍՊԸ-ների գերիշխող դիրքի հնարավոր չարաշահումների և/կամ հնարավոր հակամրցակցային համաձայնությունների վերաբերյալ հարուցել վարչական վարույթ:

Համակենտրոնացում

Տնտեսվարող սուբյեկտների համակենտրոնացում է համարվում՝

- *ՀՀ-ում գրանցված տնտեսվարող սուբյեկտների միացումը, միաձուլումը,*
- *տնտեսվարող սուբյեկտի՝ ՀՀ-ում գրանցված այլ տնտեսվարող սուբյեկտի ակտիվների ձեռքբերումը, եթե դրանց արժեքը կազմում է այդ տնտեսվարող սուբյեկտի ակտիվների արժեքի 20%-ը կամ ավելին,*
- *տնտեսվարող սուբյեկտի՝ ՀՀ-ում գրանցված այլ տնտեսվարող սուբյեկտի փայաբաժնի ձեռքբերումը, եթե դա կազմում է այդ տնտեսվարող սուբյեկտի կանոնադրական կապիտալի 20%-ը կամ ավելին,*
- *տնտեսվարող սուբյեկտների ցանկացած գործարք, գործողություն, վերակազմակերպում կամ վարքագիծ, որի շնորհիվ մեկ տնտեսվարող սուբյեկտը կարող է ազդել մեկ ուրիշի որոշումների կայացման կամ մրցունակության վրա:*

4 *ՀՀ ՏՄՊՊՀ 2019 թվականի մարտի 25-ի թիվ 30-Ա որոշում:*

Տնտեսվարող սուբյեկտների համակենտրոնացումը, մինչև գործողության մեջ դնելը, ենթակա է հայտարարագրման, եթե՝

- *համակենտրոնացման մասնակիցների ակտիվների կամ հասույթի ընդհանուր արժեքը (չափը) կամ մասնակիցներից առնվազն մեկի ակտիվների կամ հասույթի արժեքը (չափը) դրա սրեղծմանը նախորդող վերջին ֆինանսական տարում գերազանցել է ՀՀ ՏՄՊՊՀ որոշմամբ սահմանված ակտիվների կամ հասույթ(ներ)ի արժեքը (չափը),*
- *համակենտրոնացման մասնակիցներից առնվազն մեկը որևէ ապրանքային շուկայում ունի գերիշխող դիրք:*

Տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության անկյունաքարային ինստիտուտներից մեկը համակենտրոնացումների նկատմամբ պետական վերահսկողության իրականացումն է, որը հնարավորություն է տալիս ոչ միայն վերահսկել և կանխարգելել ապրանքային շուկաներում արհեստական կենտրոնացումները, այլ նաև հանդիսանում է ապրանքային շուկաներում տեղի ունեցող գործընթացների, շուկաների կառուցվածքի, գործող սուբյեկտների և այլ հատկանիշների վերաբերյալ արժեքավոր տեղեկատվության հավաքագրման միջոց:

Հատկանշական է, որ դիտարկվող համակենտրոնացումների զգալի մասը (21 համակենտրոնացում) Օրենքի իմաստով հանդիսացել է խառը համակենտրոնացում, 5-ը՝ հորիզոնական, 1-ը՝ ուղղահայաց, իսկ 2-ի դեպքում տնտեսվարող սուբյեկտները հանդիսացել են անձանց խումբ:

2019 թվականին համակենտրոնացումների վերաբերյալ հարուցվել է 30 վարչական վարույթ, որից 27-ի արդյունքում համակենտրոնացումը թույլատրվել է, 2-ը կարճվել է, 1-ը հաշվետու ժամանակահատվածի ավարտին եղել է ընթացիկ:

	2017	2018	2019
ՎԱՐՈՒՅԹՆԵՐ	43	25	**30**
ԹՈՒՅԼԱՏՐՎԱԾ ՀԱՄԱԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄՆԵՐ	42	23	**27**

Հարկ է նշել նաև, որ հանձնաժողովն աշխատանքներ է իրականացրել գործողության մեջ դրված չհայտարարագրված համակենտրոնացումների հայտնաբերման ուղղությամբ:

Համակենտրոնացումների վերաբերյալ իրականացված վարույթները և ուսումնասիրությունները փաստում են, որ տնտեսվարող սուբյեկտների

2019 թվականին չհայտարարագրված համակենտրոնացումների վերաբերյալ հարուցվել է 8 վարչական վարույթ, որից 7-ի արդյունքում կիրառվել է պատասխանատվության միջոց, 1-ը հաշվետու ժամանակահատվածի ավարտին եղել է ընթացիկ:

	2017	2018	2019
ՎԱՐՈՒՅԹՆԵՐ	23	7	8
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ	23	7	7

շրջանում, այնուամենայնիվ, առկա է համակենտրոնացումների վերաբերյալ օրենսդրական կարգավորումների մասով իրազեկվածության պակաս: Այդ ուղղությամբ ՀՀ ՏՄՊՊՀ-ն ծրագրում է ակտիվացնել աշխատանքները՝ տնտեսվարող սուբյեկտների, նրանց ներկայացուցիչների, փաստաբանների և այլ շահառուների շրջանում իրականացնելով նշված ինստիտուտի կարգավորումների, նպատակի, դերի և կարևորության վերաբերյալ տեղեկատվական և ուսուցողական բնույթի միջոցառումներ:

Բացի այդ, հանձնաժողովը շարունակելու է վերահսկողություն իրականացնել հայտարարագրման ենթակա համակենտրոնացումների նկատմամբ՝ ուշադրության կենտրոնում պահելով հատկապես հորիզոնական համակենտրոնացումները, որոնք կայացվում են միևնույն ապրանքային շուկայում գործող տնտեսվարող սուբյեկտների միջև: Նախատեսվում է առավել խորը ուսումնասիրություն իրականացնել գերիշխող դիրքի հանգեցնող կամ գերիշխող դիրքն ամրապնդող համակենտրոնացումների շրջանակներում՝ մրցակցային միջավայրի վրա դրանց հնարավոր բացասական ազդեցությունը, ապրանքային շուկայի կենտրոնացվածության մակարդակի բարձրացումը կանխարգելելու նպատակով:

Հանձնաժողովի կողմից համակենտրոնացումների նկատմամբ վերահսկողության արդյունավետությունը բարձրացնելու, ինչպես նաև տնտեսվարող սուբյեկտներին հավելյալ վարչարարությամբ չծանրաբեռնելու նպատակով հանձնաժողովն առաջարկել է «Արժեթղթերի շուկայի մասին», «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» օրենքներում կատարել համապատասխան փոփոխություններ՝ ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից բաժնետիրական ընկերությունների կանոնադրական կապիտալի (բաժնային ֆոնդի, բաժնեհավաք կապիտալի) փոփոխությունների վերաբերյալ հանձնաժողովին շարունակական հիմունքներով տեղեկատվություն տրամադրելու վերաբերյալ, իսկ տրամադրման ընթացակարգն առաջարկվել է սահմանել Կառավարության որոշմամբ:

Անբարեխիղճ մրցակցություն

Անբարեխիղճ մրցակցություն է համարվում տնտեսվարող սուբյեկտի ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը խախտում է մրցակիցների միջև կամ վերջիններիս ու սպառողների միջև բարեխղճության՝ ազնվության, արդարության, ճշմարտության և (կամ) անաչառության սկզբունքները:

Անբարեխիղճ մրցակցության դրսևորումներ են՝

- *գնտրեավարող սուբյեկտի կամ նրա գործունեության վերաբերյալ շփոթություն առաջացնելը,*
- *գնտրեավարող սուբյեկտի կամ նրա գործունեության վարկաբեկումը,*
- *հասարակության մոլորեցումը,*
- *գնտրեավարող սուբյեկտի համբավի, վարկարժեքի վնասումը,*
- *անտեղի համեմատությունների կատարումը:*

Մրցակցության պաշտպանության, ինչպես նաև սպառողների շահերի պաշտպանության տեսանկյունից կարևորվում է անբարեխիղճ մրցակցության դրսևորումների բացահայտումը և դադարեցումը, որոնք տնտեսական մրցակցության ամենատարածված խախտումներն են և ունեն դրսևորման բազմաթիվ ձևեր:

2019 թվականին հնարավոր անբարեխիղճ մրցակցության վերաբերյալ հարուցվել է 57 վարչական վարույթ, որից 24-ը հաշվետու ժամանակահատվածի ավարտին եղել է ընթացիկ: Կիրառվել է 19 պատասխանատվության միջոց:

	2017	2018	2019
ՎԱՐՈՒՅԹՆԵՐ	55	35	57
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ	54	33	19

Վարույթները հիմնականում վերաբերել են գրանցված և ՀՀ-ում իրավական պահպանություն ստացած ապրանքային նշաններին շփոթության աստիճանի նման կամ նույնական ապրանքային նշանի օգտագործմանը, հասարակության մոլորեցմանը, որոնք դրսևորվել են հեռուստատեսությամբ հեռարձակվող գովազդում կամ ապրանքների մակնշումներում և այլ տեղեկատվական նյութերում մոլորեցնող բնույթի տեղեկություններ տարածելով:

2019 թ. անբարեխիղճ մրցակցության գործողությունների վերաբերյալ հարուցված վարչական վարույթները

Անբարեխիղճ մրցակցության դրսևորման տեսակներ	Ավարտված վարույթներ	Ընթացիկ վարույթներ (31.12.2019 դրությամբ)
Տնտեսվարող սուբյեկտի կամ նրա գործունեության վերաբերյալ շփոթության առաջացում	**9**	**15**
Հասարակության մոլորեցում	**10**	**7**
Այլ		**2**

Նշված վարույթներից առավել հետաքրքրական են՝

«Գրին վեյ թրեվլ» ՍՊԸ դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի արդյունքում հանձնաժողովը «Գրին վեյ լոջիսթիքս» ՍՊԸ նկատմամբ կիրառել է պատասխանատվության միջոց[5]:

«Գրին վեյ լոջիսթիքս» ընկերությունը օգտագործել է չգրանցված «GW GREEN WAY LOGISTICS» ապրանքային նշանը, որում «GREEN WAY» արտահայտության կիրառումը շփոթության աստիճանի նման է գրանցված և ՀՀ-ում կանաչ և սև գունային համակցությամբ իրավական պահպանության ենթակա «GREENWAY TRAVEL AGENCY» ապրանքային նշանին և կարող է առաջացնել շփոթություն:

«Արբրեն» ՍՊԸ դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի արդյունքում հանձնաժողովը «Ալկո Իմպորտ Էքսպորտ» ՍՊԸ նկատմամբ կիրառել է պատասխանատվության միջոց[6]:

«Ալկո Իմպորտ Էքսպորտ» ընկերությունն օգտագործել է «ՄՎ Գրուպ Պրոդակշն» ընկերության անունով գրանցված և ՀՀ-ում իրավական պահպանության ենթակա «STUMBRAS VODKA» ապրանքային նշանին թե՛ գրաֆիկական (տեսողական), և թե՛ ձայնային (հնչյունային) առումներով, ապրանքային նշանի առանձին տարրերի՝ միմյանց նկատմամբ հարաբերակցությամբ կրկնվող ապրանքային նշան: Բացի այդ, «Ալկո Իմպորտ Էքսպորտ» ընկերության կողմից արտադրված ապրանքի արտաքին տեսքը նույնական է նաև «Արբրեն» ընկերության կողմից ներմուծված ապրանքի տեսքին, մասնավորապես՝ շշի արտաքին տեսքը, չափը, գունային համակցությունը, ինչպես նաև դրա վրա առկա գրառումները, ինչի արդյունքում մեծանում է նշված ապրանքների միջև շփոթության առաջացման հավանականությունը: Հանձնաժողովն «Ալկո Իմպորտ Էքսպորտ» ընկերության վերը նշված գործողություններն ու վարքագիծը որակել է որպես անբարեխիղճ մրցակցության գործողություն՝ շփոթության առաջացում:

Հանձնաժողովը որոշել է, որ «Ալկո Իմպորտ Էքսպորտ» ընկերության կողմից արտադրվող և իրացվող «ПЯТЬ ОЗЕР» ապրանքային նշանով օղիները շփոթության աստիճանի նման են «Օմսկվինպրոմ» ընկերությանը պատկանող «ПЯТЬ ОЗЕР» ապրանքային նշանով արտադրված ապրանքներին, ինչը որակել է որպես անբարեխիղճ մրցակցության գործողություն և ընկերության նկատմամբ կիրառել պատասխանատվության միջոց[7]:

Հանձնաժողովը վարչական վարույթ է իրականացրել «Ալկո Իմպորտ Էքսպորտ» ՍՊԸ-ի կողմից արտադրվող և իրացվող «ПЯТЬ ОЗЕР» ապրանքային նշանով օղիների վերաբերյալ: Վարչական վարույթի արդյունքում պարզվել է, որ տվյալ ապրանքային նշանը գրանցված է «Five Lakes Cyprus Ltd.» կիպրական ընկերության անվամբ և իրավական պահպանություն է ստացել ՀՀ-ում:

«Ավանի աղի կոմբինատ» ՓԲԸ դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի արդյունքում հանձնաժողովը «Սոլտեքս» ՍՊԸ-ի նկատմամբ կիրառել է պատասխանատվության միջոց[8]:

«Սոլտեքս» ընկերության ներմուծած և իրացրած «Եռակի մաքրազտված կերակրի աղ» անվանումով ապրանքի փաթեթավորման վրա ներմուծողի անվանման և հասցեի, ինչպես նաև հեքսացիանոֆերատ նյութի առկայության, ապրանքի արտադրության ամսաթվի և ներմուծող ընկերության վերաբերյալ նշումների բացակայությունը հանձնաժողովը որակել է որպես անբարեխիղճ մրցակցության գործողություն՝ հասարակության մոլորեցում, քանի որ սպառողը չի կարողանում ամբողջական պատկերացում կազմել իրացվող «Եռակի մաքրազտված կերակրի աղ» անվանումով ապրանքի վերաբերյալ:

5 ՀՀ ՏՄՊՊՀ 2019 թվականի մարտի 25-ի թիվ 31-Ա որոշում:
6 ՀՀ ՏՄՊՊՀ 2019 թվականի սեպտեմբերի 6-ի թիվ 107-Ա որոշում:
7 ՀՀ ՏՄՊՊՀ 2019 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 143-Ա որոշում:
8 ՀՀ ՏՄՊՊՀ 2019 թվականի հուլիսի 3-ի թիվ 79-Ա որոշում:

«Պարգև» ՍՊԸ արտադրած «Աշտարակ կաթ» ապրանքային նշանով թթվասերային մթերքի տուփի վերին և կողային հատվածներում մակնշված «Բարձրորակ կաթնային մթերք պատրաստված Դասական Թթվասերի տեխնոլոգիայով» գրառման մեջ «Թթվասերի» բառը մնացած բառերի համեմատությամբ մակնշվել է ավելի մեծ տառաչափով, նշված տուփի վրա օգտագործվել է «կաթնային մթերք» արտահայտությունն այն դեպքում, երբ վերը նշված ապրանքը պարունակում է կոկոսի յուղ, և այն կաթնային մթերք չէ:

Հանձնաժողովը «Պարգև» ընկերության վերը նշված գործողություններն ու վարքագիծը որակել է որպես անբարեխիղճ մրցակցության գործողություն՝ հասարակության մոլորեցում, և ընկերության նկատմամբ կիրառել պատասխանատվության միջոց[9]:

Հանձնաժողովը ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ներկայացրած տեղեկատվության հիման վրա վարչական վարույթներ է իրականացրել մի շարք տնտեսվարող սուբյեկտների՝ թթվասերի իրացման գործընթացում անբարեխիղճ մրցակցության հնարավոր դրսևորումները բացահայտելու ուղղությամբ: Վարչական վարույթների արդյունքում հանձնաժողովն անբարեխիղճ մրցակցության գործողություն՝ հասարակության մոլորեցում է որակել ԱՁ «Գ. Մանուկյան»-ի և «Լոռվա Կաթ» ընկերության արտադրած համապատասխանաբար «Թթվասեր 18%» և «Թթվասեր 20%» ապրանքները որպես թթվասեր մակնշելն այն դեպքում, երբ փորձարկման արձանագրության համաձայն՝ դրանցում առկա է բուսական յուղ, ինչպես նաև «Կաթի և կաթնամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության թիվ ՄՄ ՏԿ 033/2013 տեխնիկական կանոնակարգի իմաստով դրանք «թթվասեր» չեն:

Նշված ընկերությունների նկատմամբ կիրառվել են պատասխանատվության միջոցներ[10]:

9 *ՀՀ ՏՄՊՊՀ 2019 թվականի նոյեմբերի 5-ի թիվ 155-Ա որոշում:*
10 *ՀՀ ՏՄՊՊՀ 2019 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 190-Ա որոշում:*

Պետական օժանդակության վերահսկողություն և պետական մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց հակամրցակցային գործողությունների կամ վարքագծի արգելում

Պետական օժանդակություն է համարվում պետական մարմնի կողմից կոնկրետ տնտեսվարող սուբյեկտին տրամադրվող ցանկացած օժանդակությունը (ներառյալ՝ ֆինանսական միջոցներ, այդ թվում՝ օգնություն, վարկ, փոխառություն, գույք, արտոնություններ կամ այլ պայմաններ): Պետական օժանդակությունը, որը հանգեցնում է որևէ ապրանքային շուկայում մրցակցության սահմանափակմանը, կանխմանը կամ արգելմանը կամ վնասում է սպառողների շահերը, արգելվում է, բացառությամբ այն դեպքերի, երբ նշված օժանդակությունը նախատեսված է օրենքով:

Օրենսդրական փոփոխությունների արդյունքում ՀՀ ՏՄՊՊՀ-ին վերապահվել է պետական օժանդակության միասնական գրանցամատյանի վարման գործառույթ, և սահմանվել են պետական օժանդակություն տրամադրող մարմինների կողմից պետական օժանդակության վերաբերյալ հանձնաժողովին տեղեկատվություն ներկայացնելու ժամկետները և կարգը, այդ թվում՝ ներկայացվող տեղեկատվության ձևն ու բովանդակությունը:

Գրանցամատյանը հնարավորություն կտա ունենալ մեկ միասնական տեղեկատվական բազա, որում տեղեկություններ կլինեն՝

- *պետական օժանդակություն տրամադրած մարմինների,*
- *պետական օժանդակության տրամադրման պահի,*
- *տրամադրված պետական օժանդակության աղբյուրի,*
- *պետական օժանդակության տրամադրման ծրագրի,*
- *տրամադրված պետական օժանդակության իրավական հիմքերի,*
- *պետական օժանդակության տրամադրման վերաբերյալ համապատասխան իրավական ակտի,*
- *տրամադրված պետական օժանդակության տեսակի և դրսևորման ձևի,*
- *պետական օժանդակության տրամադրման նպատակի,*
- *պետական օժանդակություն ստանալու համար անհրաժեշտ պայմանների, չափանիշների և պահանջների,*
- *տրամադրված պետական օժանդակության տարածքի (մարզ/համայնք/քաղաք/վարչական միավոր և այլն),*

- *պրամադրված պետական օժանդակության ոլորտի,*
- *պրամադրված պետական օժանդակության ընդհանուր չափի և քանակի,*
- *պետական օժանդակության պրամադրման ժամանակահատվածի,*
- *պետական օժանդակություն ստացողների,*
- *պետական օժանդակության՝ հնարավոր անկանխատեսելի և հրատապ լուծում պահանջող հարցերի լուծման կամ արտակարգ կամ ֆորսմաժորային իրավիճակի հետևանքով առաջացած խնդիրների կարգավորման ուղղվածության,*
- *պրամադրումից հետո պետական օժանդակության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների առկայության,*
- *պետական օժանդակության պրամադրումից հետո պետական օժանդակության սահմանապատիվ արդյունավետության գնահատման մեխանիզմների առկայության,*
- *պետական օժանդակության հնարավոր ընտրողականության վերաբերյալ:*

Պետական մարմնի կամ դրա պաշտոնատար անձի գործողությունները կամ վարքագիծը կամ ակտերը, որոնք սահմանափակում, կանխում կամ արգելում են տնտեսական մրցակցությունը, արգելվում են:

Հանձնաժողովը բողոքներ է ստանում այնպիսի երևույթների վերաբերյալ, երբ մրցակցության խաթարման պատճառ են հանդիսանում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ընդունած իրավական ակտերը, գործողությունները կամ վարքագիծը:

2019 թվականին պետական մարմինների հնարավոր հակամրցակցային գործողությունների վերաբերյալ հարուցվել է 6 վարչական վարույթ: Կիրառվել է 1 պատասխանատվության միջոց:

2018	2019
ՎԱՐՈՒՅԹՆԵՐ	
0	6
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ	
0	1

Հանձնաժողովը նմանատիպ դիմում է ստացել «Վճարահաշվարկային կազմակերպությունների ասոցիացիա» ՀԿ ներկայացուցչից, ըստ որի՝ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի հուլիսի 12-ի «Բաժանորդների կանխավճարային և հետվճարային հաշիվների համալրման, վերալիցքավորման քարտերի վաճառքի և հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների դիմաց վճարումների ընդունման մասին» թիվ 307-Ն որոշմամբ խախտվել են մրցակցային օրենսդրության դրույթները:

Վարչական վարույթի արդյունքում Օրենքի խախտման փաստեր չեն հայտնաբերվել[11]:

Լաբորատոր փորձաքննությունների ոլորտում գործունեություն ծավալող «Ստանդարտ դիալոգ» ՍՊԸ-ից ստացված դիմումի համաձայն՝ նույն ոլորտում վճարովի ծառայություններ են մատուցում նաև որոշ պետական ոչ առևտրային կազմակերպություններ, որոնց գործունեությունն էականորեն կարող է սահմանափակել տնտեսական մրցակցությունը լաբորատոր փորձաքննությունների ծառայության մատուցման ոլորտում:

Վարչական վարույթի շրջանակում իրականացված ուսումնասիրության արդյունքում հանձնաժողովն արձանագրել է, որ աննդամթերքի փորձաքննությունների ոլորտում գործունեություն ծավալող բոլոր տնտեսվարող սուբյեկտների մատուցած ծառայությունների գները համադրելի են և մրցակցային: Այսինքն՝ վերոգրյալ կազմակերպությունների՝ պետական միջոցների օգտագործումը մրցակցության տեսանկյունից չի ազդել կազմակերպությունների գնային քաղաքականության վրա, հետևաբար նրանց գործունեության մեջ Օրենքի խախտումներ չկան[12]:

Հանձնաժողովը ստացել է դիմում ԱՁ «Գրիգոր Այվազյան»-ից ՀՀ դատական դեպարտամենտի հայտարարած գնման ընթացակարգերից մեկի հրավերի տեխնիկական բնութագրի բովանդակության վերաբերյալ: Դիմումի հիման վրա հարուցվել է վարչական վարույթ, որի արդյունքում պարզվել է, որ դեպարտամենտի հայտարարած գնման ընթացակարգի որոշ չափաբաժինների շրջանակներում ձեռքբերվող գնման առարկաների համար սահմանվել են այնպիսի տեխնիկական բնութագրեր, որոնք հնարավորություն չեն տվել հստակ պատկերացնել մատուցվելիք ծառայությունների բնույթը, արդյունքում ընկերությունները չեն կարողացել մասնակցել տվյալ գնման ընթացակարգին:

Հանձնաժողովն արձանագրել է, որ դեպարտամենտի գործողությունները սահմանափակել են տնտեսական մրցակցությունը, մասնավորապես՝ տնտեսվարող սուբյեկտների՝ մրցույթին մասնակցելու հնարավորությունը, հետևաբար, նաև ձեռնարկատիրական գործունեության իրականացումը: Հանձնաժողովի որոշմամբ [13] դեպարտամենտի նկատմամբ կիրառվել է պատասխանատվության միջոց:

11 *ՀՀ ՏՄՊՊՀ 2019 թվականի հունիսի 25-ի թիվ 75-Ա որոշում:*
12 *ՀՀ ՏՄՊՊՀ 2019 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ 112-Ա որոշում:*
13 *ՀՀ ՏՄՊՊՀ 2019 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 137-Ա որոշում:*

2019 թվականին ավարտված վարչական վարույթները՝ ըստ ոլորտների

	Հակամրցակցային համաձայնություն	Գերիշխող դիրքի չարաշահում	Համակենտրոնացում	Չհայտարարագրված համակենտրոնացում
Գազավորված ըմպելիքներ		1		
Դեղեր		2		
Թունաքիմիկատներ		1		
Գազահաշվիչների տեղադրում, գազի սպասարկում		2		
Փոստային ծառայություններ		2		
Բջջային հեռախոսների իրացում		1		
Գովազդային ծառայություններ		1		
Ծխախոտ	1	2		
Շինարարություն			2	
Հյուրանոցային ծառայությունների մատուցում			2	2
Տարածքների/անշարժ գույքի վարձակալություն			6	1
Ներդրումային ծառայությունների մատուցում			4	
Ֆինանսական ծառայություններ			2	
Գյուղատնտեսություն	1		2	
Շինանյութի ներմուծում, իրացում			1	
Հանքային ջուր			1	
Էլեկտրաէներգիա	1		2	
Վիզաների դիմումների փաստաթղթավորում և ուղեկցում հյուպատոսական հիմնարկներում			1	
Արտադրություն			4	1
Հանքարդյունաբերություն			2	
Ուղևորային և բեռնային ավիափոխադրումներ				1
Ճանապարհների հիմնանորոգում և սպասարկում				1
Խաղատնային գործունեություն				1

3. Ապրանքային շուկաների ուսումնասիրություն

Շուկայի ուսումնասիրությունը շուկայի, վաճառքի նպատակով շուկայում առաջարկվող ապրանքի կամ ծառայության, դրանց նախկին, ներկա կամ հավանական սպառողի մասին տեղեկատվության հավաքագրման, վերլուծության և մեկնաբանման գործընթացն է:

Հանձնաժողովը որևէ ոլորտում իրականացնում է ուսումնասիրություն ապրանքային շուկայում կամ տարածքում մրցակցային իրավիճակը, տնտեսական մրցակցության հնարավոր կանխման, սահմանափակման կամ արգելման կամ սպառողների շահերի հնարավոր վնասման դեպքերը պարզելու, մրցակցային իրավիճակի վրա ազդող այլ պայմանները բացահայտելու նպատակով:

Ոլորտային ուսումնասիրության շրջանակում հանձնաժողովը կարող է սահմանել ապրանքային շուկա, ուսումնասիրել ապրանքային շուկայի կառուցվածքը, կենտրոնացվածության աստիճանը, ոլորտի կամ շուկայի դինամիկան, հայտնաբերել անձանց խումբ հանդիսացող տնտեսավարող սուբյեկտներին, ուսումնասիրել ոլորտի կամ շուկայի իրավակարգավորումները և վեր հանել խնդիրները, այդ թվում՝ օրենսդրական բացերը և սողանցքները, բացահայտել շուկայում ինքնակարգավորման մեխանիզմները, պարզել օրենքի հնարավոր խախտման հատկանիշները, եզրահանգումներ կատարել մրցակցային իրավիճակի վերաբերյալ, կազմել վերլուծական հաշվետվություն:

Ոլորտային ուսումնասիրությունը չի հանդիսանում վարչական վարույթ կամ վարչական իրավախախտման վարույթ:

Բովանդակություն

Հանձնաժողովը 2019 թվականին ուսումնասիրություններ է իրականացրել **«Բենզին»** և **«Դիզելային վառելիք»**, **«Սեղմված գազ»**, **«Կարագ»**, **«Շաքարավազ»**, **«Կոնյակ»** ապրանքային շուկաներում: Նշված շուկաների ընտրությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով, ինչպիսիք են՝ այդ շուկաներում կենտրոնացվածության, մրցակցության օրենսդրության խախտումների ռիսկայնության համեմատաբար բարձր մակարդակը, այդ ապրանքների և դրանց հետ փոխկապակցված ապրանքների սոցիալական նշանակությունը, դրանց ազդեցությունը ՀՀ տնտեսության ճյուղերի, արտահանման, արտադրության, մրցունակության վրա և այլն: Ընդ որում, նշված ապրանքային շուկաների ուսումնասիրությունն ուղղված է ոչ միայն տնտեսական մրցակցության հնարավոր չարաշահումների բացահայտմանը, այլև նպատակ ունի հասարակությանը, վերլուծաբաններին, լրատվամիջոցներին, տնտեսվարող սուբյեկտներին, տվյալ շուկաներում գործունեություն ծավալել ցանկացող անձանց ամբողջական և համապարփակ տեղեկատվություն ներկայացնել այդ ապրանքային շուկաներում տիրող փաստացի վիճակի, իրավական կարգավորումների, առկա խնդիրների և այլ փաստերի վերաբերյալ:

Նշված ապրանքային շուկաներում ուսումնասիրություն իրականացնելու մեթոդաբանության հիմքում դրվել են ՏՀԶԿ (OECD), ՄՄՑ (ICN), ԱՊՀ ՀՔՄԽ (МСАП) և այլ միջազգային կազմակերպությունների և մրցակցային մարմինների փորձի հիման վրա կազմված ուղեցույցներում առաջարկվող մոտեցումները: Մասնավորապես, բացի ապրանքային շուկայի ապրանքատեսակային և աշխարհագրական սահմանների հատկորոշումից, ապրանքային շուկայի ծավալի, դրանում գործող սուբյեկտների կազմի և նրանց մասնաբաժինների, փոխադարձ փոխարինելի ապրանքների վերհանումից, ուսումնասիրության էական մաս են կազմել տվյալ շուկայի իրավական գործընթացները կանոնակարգող ակտերի համալիր ուսումնասիրությունը, ինչպես նաև ապրանքային շուկայում մուտքի հնարավոր խոչընդոտներ ստեղծող այլ երևույթները և դրանց պատճառները:

«Կարագ» ապրանքային շուկայի ուսումնասիրություն[14]

«Կարագ» ապրանքային շուկայում հանձնաժողովի իրականացրած ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 2018 թվականի ընթացքում Հայաստան է ներմուծվել շուրջ 3 986 տոննա կարագ 41 տնտեսավարող սուբյեկտի կողմից: Միաժամանակ, 2019 թվականի հունվարից հոկտեմբեր ընկած ժամանակահատվածում ներմուծվել է 2 727 տոննա կարագ՝ 2018 թվականի նույն ժամանակահատվածի 3 000 տոննայի փոխարեն (9%-ով պակաս):



Չնայած 2019 թվականի դիտարկվող ժամանակահատվածում կրճատվել են ներմուծված կարագի ծավալը և կարագ ներմուծող ընկերությունների թվաքանակը՝ որոշակի դրական փոփոխություններ են տեղի ունեցել կարագ ներմուծող խոշոր ընկերությունների մասնաբաժինների կրճատման, Նոր Զելանդիայից Հայաստան կարագ ներմուծող ընկերությունների թվաքանակի, կարագի արտադրության ծավալների ավելացման հետ կապված: Անդրադառնալով կարագի արտադրությանը՝ հարկ է նշել, որ 2018 թվականի ընթացքում Հայաստանում արտադրվել է մոտ 683 տոննա կարագ 29 ընկերության կողմից:

Հայաստան ներմուծված կարագի կառուցվածքն ըստ տվյալ երկրից կարագ ներմուծող ընկերությունների թվաքանակի՝

2018 (հունվար-հոկտեմբեր)		2019 (հունվար-հոկտեմբեր)	
1	Նոր Զելանդիա	2	Նոր Զելանդիա
10	Ուկրաինա	8	Ուկրաինա
1	Ֆինլանդիա	2	Ֆինլանդիա
7	Բելառուս	5	Բելառուս
21	Ռուսաստան	16	Ռուսաստան
1	Վրաստան	2	Վրաստան
3	Ֆրանսիա	3	Ֆրանսիա
1	Դանիա	1	Դանիա
2	Իտալիա	2	Իտալիա
1	Լատվիա	1	Լատվիա
1	Գերմանիա		
1	Իրան		
		1	Ավստրալիա

Հանձնաժողովի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ 2019 թվականի դիտարկվող ժամանակահատվածում արտադրված կարագի ծավալը մոտ 46%-ով գերազանցել է նախորդող ժամանակահատվածի նույն ցուցանիշը, ինչն ուղեկցվել է նաև կարագ արտադրող ընկերությունների թվաքանակի ավելացմամբ:

Հանձնաժողովն իրականացրել է նաև 2018 և 2019 թվականների հունվարից հոկտեմբեր ընկած ժամանակահատվածներում Հայաստանից արտահանված կարագի համեմատական վերլուծություն, որի արդյունքում պարզ է դարձել, որ արտահանված կարագի ծավալները մոտ 4 անգամ ավելացել են՝ կազմելով 52 տոննա:

2018 թվականին կարագ իրացրել է 58 ընկերություն, ընդ որում՝ առաջին 3 խոշոր ընկերությունների ընդհանուր մասնաբաժինը կարագի իրացման մեջ կազմել է 79%:

14 «Կարագ» ապրանքային շուկայի ուսումնասիրության էլեկտրոնային տարբերակը զետեղված է ՀՀ ՏՄՊՊՀ պաշտոնական ինտերնետային կայքում՝ http://competition.am/uploads/resources/Butter_commodity_market.pdf հղմամբ:

Բովանդակություն

Հանձնաժողովն իրականացրել է նաև 2018 և 2019 թվականների հունվարից հոկտեմբեր ընկած ժամանակահատվածներում կարագի իրացման ցուցանիշների վերլուծություն, որի արդյունքում պարզ է դարձել, որ 2019 թվականի հունվարից հոկտեմբեր ընկած ժամանակահատվածում կարագի իրացման գները նվազել են:

Նորվելանդական կարագի իրացման մանրածախ գների դինամիկան [15]



Միաժամանակ, 2018 և 2019 թվականների դիտարկվող ժամանակահատվածներում կարագի իրացման առավել խոշոր ծավալներ ունեցող առաջին երեք ընկերությունների մասնաբաժինները կազմել են համապատասխանաբար 79% և 69%:

Հանձնաժողովի գնահատմամբ՝ 2018 թվականի դիտարկվող ժամանակահատվածում առաջին երեք մասնակիցների տվյալներով հաշվարկված «Կարագ» ապրանքային շուկայի բարձր կենտրոնացվածության մակարդակը 2019 թվականի նույն ժամանակահատվածի ընթացքում կրճատվել է՝ հասնելով կենտրոնացվածության միջին մակարդակի:

«Կարագ» ապրանքային շուկայի ուսումնասիրության արդյունքում հանձնաժողովի կողմից վեր են հանվել խնդիրներ, որոնք կարող են բացասաբար ազդել տվյալ շուկայում առկա մրցակցային միջավայրի վրա:

15 Գծապատկերում ներկայացված են խոշոր առևտրային ցանցերում հանձնաժողովի իրականացրած դիտարկման արդյունքում ամրագրված կարագի («New Zealand»՝ 82.9%) մանրածախ միջին գները՝ ներառյալ ԱԱՀ-ն:

Մասնավորապես՝

- *առկա են անհամապատասխանություններ ԵԱՏՄ արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկով և «Կաթի և կաթնամթերքի անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգով ներկայացվող սահմանումների և պահանջների միջև,*
- *ԵԱՏՄ արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկով բացակայում է «սիրեղ»-ի համար ԱՏԳ ԱԱ ծածկագիրը,*
- *առկա չէ միևնույն ֆիզիկական անձի կողմից անձնական օգտագործման ապրանքներն առանց մաքսատուրքի օդային տրանսպորտով և (կամ) օդային տրանսպորտից տարբեր տեսակներով ՀՀ տարածք ներմուծելու հաճախականության և (կամ) միևնույն ֆիզիկական անձի կողմից որոշակի ժամանակահատվածում (օրինակ՝ մեկ ամսում) տվյալ ապրանքի (մասնավորապես՝ կարագի) ներմուծման քանակական և արժեքային հստակ կարգավորում,*
- *Բելառուսի Հանրապետության գյուղատնտեսության և սննդի նախարարությունն ընդունել է որոշում, որով սահմանվել են որոշակի ապրանքների, այդ թվում՝ կարագի արտահանման նվազագույն գներ:*

Միաժամանակ, կարագի մանրածախ իրացման գործընթացի կազմակերպման մասով հանձնաժողովի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ շատ հաճախ առևտրի կետերում (հատկապես խոշոր առևտրային ցանցերում) կարագը, սփրեդը և մարգարինը ներկայացված են միասին, ինչը կարող է շփոթություն առաջացնել սպառողների շրջանում (շատ դեպքերում, երբ կարագն ու սփրեդը վաճառվում են կիլոգրամով, հնարավոր է նաև արտադրող կամ իրացնող ընկերության կողմից անբարեխիղճ գործողությունների դրսևորում):

Բացի այդ, ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ կարագի մանրածախ և մեծածախ իրացման ոլորտներում որոշ տնտեսվարող սուբյեկտների կողմից վարվող գնային քաղաքականությունը, ինչպես նաև ապրանքային շուկայում ապրանքների շրջանառության ընդհանուր պայմանների վրա ազդեցությունը կարող է պարունակել Օրենքի հնարավոր խախտումների հատկանիշներ, ինչի առնչությամբ հարուցվել է վարչական վարույթ:

«Շաքարավազ» ապրանքային շուկայի ուսումնասիրություն[16]

Ուսումնասիրության հիմնական ուղղություններն են ոլորտում առկա պետական կարգավորումների և օրենսդրական դաշտի ուսումնասիրությունը և դրա ազդեցությունը մրցակցային միջավայրի վրա, շուկայի կառուցվածքի, գնի և ինքնարժեքի կառուցվածքի, իրացման շղթայի ուսումնասիրությունները և այլն:

Ըստ ՀՀ ՊԵԿ-ի տվյալների՝ 2018 թվականի ընթացքում ՀՀ տարածք է ներմուծվել 23 600 տոննա շաքարավազ 48 տնտեսավարող սուբյեկտի կողմից, իսկ 2019 թվականի հունվար-հոկտեմբեր ժամանակահատվածում՝ 8 000 տոննա 47 տնտեսավարող սուբյեկտի կողմից: Ներմուծված շաքարավազը հիմնականում եղել է ուկրաինական ծագման:



16 *«Շաքարավազ» ապրանքային շուկայի ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ հրապարակման ենթակա տեղեկատվությունը զետեղված է ՀՀ ՏՄՊՊՀ պաշտոնական ինտերնետային կայքում՝ http://competition.am/uploads/resources/Sugar_Commodity_Market.pdf հղմամբ:*

Բովանդակություն

2018 թվականի ընթացքում ՀՀ-ում արտադրվել է 58 000 տոննա շաքարավազ, իսկ 2019 թվականի հունվար-հոկտեմբեր ընկած ժամանակահատվածում՝ 59 800 տոննա:

Շաքարավազի ներմուծման և իրացման ծավալներով 2018 և 2019 թվականներին առաջատար են եղել «Ալեքս հոլդինգ» ու «Ալեքս էնդ հոլդինգ» ՍՊԸ-ները և «Արմեն-Համիկ եղբայրներ ՀՁ» ՍՊԸ-ն: Վերջիններիս ներմուծման ծավալն ընդհանուր ներմուծման ծավալում 2018 թվականին կազմել է 82%, իսկ 2019 թվականին՝ 79%: Նշված ընկերությունների իրացման ծավալն ընդհանուր իրացման ծավալում 2018 թվականին կազմել է 98%, իսկ 2019 թվականին՝ 96%:

Հանձնաժողովն արձանագրել է, որ 2018 թվականի հունվարից մինչև 2019 թվականի հոկտեմբեր ընկած ժամանակահատվածում շաքարավազի շուկան, ըստ ներմուծման և իրացման, ունեցել է բարձր կենտրոնացվածության մակարդակ:

2018 թվականի հունվարից մինչև 2019 թվականի նոյեմբերն ընկած ժամանակահատվածում 1 կգ շաքարավազի միջին մեծածախ և միջին մանրածախ գների դինամիկան (ներառյալ ԱԱՀ)



«Շաքարավազ» ապրանքային շուկայի ուսումնասիրության արդյունքում հանձնաժողովը եզրահանգել է՝

- *շաքարավազ իրացնող որոշ ընկերություններ միաժամանակ զբաղվում են շաքարավազի և՛ մեծածախ, և՛ մանրածախ իրացմամբ,*

- *ընկերությունների կողմից սահմանված մեծածախ գների և սեփական առևտրային օբյեկտների միջոցով սպառողներին իրացվող ապրանքների մանրածախ գների տարբերությունը բավականին փոքր է,*
- *հնարավոր գերիշխող դիրք ունեցող ընկերությունները շաքարավազ իրացնելիս գնորդ ընկերությունների համար հաճախ սահմանում են իրացման տարբեր գներ կամ պայմաններ,*
- *շաքարավազի արտադրության նպատակով թանկ հումքի ձեռքբերման և ներմուծվող շաքարավազի առավել մատչելի լինելու պարագայում տեղական արտադրությունը ներքին շուկայում ներմուծվողի նկատմամբ դառնում է անմրցունակ:*

Ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ շաքարավազի մանրածախ և մեծածախ իրացման ոլորտներում մի շարք տնտեսվարող սուբյեկտների կողմից վարվող գնային քաղաքականությունը, ինչպես նաև ապրանքային շուկայում ապրանքների շրջանառության ընդհանուր պայմանների վրա ազդեցությունը կարող է պարունակել Օրենքի հնարավոր խախտումների հատկանիշներ, որոնց առնչությամբ հարուցվել է վարչական վարույթ:

«Բենզին» և «Դիզելային վառելիք» ապրանքային շուկաների ուսումնասիրություն[17]

2018 թվականի ընթացքում ներմուծվել է շուրջ 159 966 տոննա բենզին 6 տնտեսվարող սուբյեկտի կողմից, իսկ 2019 թվականի հունվարի 1-ից մինչև հոկտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում՝ շուրջ 146 655 տոննա 4 տնտեսվարող սուբյեկտի կողմից: 2018 թվականին ներմուծման առավել խոշոր ծավալներ են ունեցել «Սիփիէս օիլ քորփորեյշն», «Ֆլեշ» ՍՊԸ-ները և «Մաքս Պետրոլ» ՓԲԸ-ն: Վերջիններիս մասնաբաժինն ընդհանուր ներմուծման ծավալում 2018 թվականին կազմել է շուրջ 92%:

Բենզինի ներմուծման ծավալները՝ ըստ ներմուծման երկրների



2019 թվականի ընթացքում ներմուծման առավել խոշոր ծավալներ են ունեցել «Սիփիէս օիլ քորփորեյշն», «Սիփիէս օիլ», «Ֆլեշ» ՍՊԸ-ները և «Մաքս Պետրոլ» ՓԲԸ-ն, որոնց մասնաբաժինն ընդհանուր ներմուծման ծավալում կազմել է շուրջ 100%:

2018 թվականի ընթացքում ներմուծվել է շուրջ 153 236 տոննա դիզելային վառելիք 6 տնտեսվարող սուբյեկտի կողմից: Առավել խոշոր ներմուծման ծավալներ են ունեցել «Սիփիէս օիլ քորփորեյշն», «Ֆլեշ» ՍՊԸ-ները և «Մաքս Պետրոլ» ՓԲԸ-ն, վերջիններիս մասնաբաժինն ընդհանուր ներմուծման ծավալում կազմել է շուրջ 97%:

---

17 «Բենզին» և «Դիզելային վառելիք» ապրանքային շուկաների ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ հրապարակման ենթակա տեղեկատվությունը զետեղված է ՀՀ ՏՄՊՊՀ պաշտոնական ինտերնետային կայքում՝ http://competition.am/uploads/resources/Petrol_Diesel_Commodity_Markets.pdf հղմամբ:



Դիզելային վառելիքի ներմուծման ծավալներն՝ ըստ երկրների

2019 թվականի հունվարի 1-ից մինչև հոկտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում 16 տնտեսվարող սուբյեկտ ներմուծել է շուրջ 118 650 տոննա դիզելային վառելիք: Առավել խոշոր ներմուծման ծավալներ ունեն «Սիփիէս օիլ քորփորեյշն», «Սիփիէս օիլ», «Ֆլեշ» ՍՊԸ-ները և «Մաքս Պետրոլ» ՓԲԸ-ն, որոնց մասնաբաժինն ընդհանուր ներմուծման ծավալում կազմել է շուրջ 92%:

Բենզինի իրացման շղթան

Մեծածախ

Մանրածախ

Վերջնական իրացում

2018 թվականի ընթացքում իրացվել է շուրջ 230 379 000 լիտր բենզին 6 տնտեսվարող սուբյեկտի կողմից, որում առավել խոշոր իրացման ծավալներ են ունեցել «Սիփիէս օիլ քորփորեյշն», «Ֆլեշ» ՍՊԸ-ները և «Մաքս Պետրոլ» ՓԲԸ-ն, վերջիններիս մասնաբաժինն ընդհանուր իրացման ծավալում կազմել է շուրջ 93%:

2019 թվականի հունվարի 1-ից մինչև հունիսի 1-ն ընկած ժամանակահատվածում իրացվել է շուրջ 102 738 000 լիտր բենզին 4 տնտեսվարող սուբյեկտի կողմից: Առավել խոշոր իրացման ծավալներ ունեն «Սիփիէս օիլ քորփորեյշն», «Սիփիէս օիլ», «Ֆլեշ» ՍՊԸ-ները և «Մաքս Պետրոլ» ՓԲԸ-ն, որոնց մասնաբաժինն ընդհանուր իրացման ծավալում կազմել է գրեթե 99%:

2018 թվականի ընթացքում իրացվել է շուրջ 207 469 000 լիտր դիզելային վառելիք 6 տնտեսվարող սուբյեկտի կողմից, որում առավել խոշոր իրացման ծավալներ են ունեցել «Սիփիէս օիլ քորփորեյշն», «Ֆլեշ» ՍՊԸ-ները և «Մաքս Պետրոլ» ՓԲԸ-ն, վերջիններիս մասնաբաժինն ընդհանուր իրացման ծավալում կազմել է շուրջ 97%:

2019 թվականի հունվարի 1-ից մինչև հունիսի 1-ն ընկած ժամանակահատվածում իրացվել է շուրջ 74 326 000 լիտր դիզելային վառելիք 7 տնտեսվարող սուբյեկտի կողմից: Առավել խոշոր իրացման ծավալներ ունեն «Սիփիէս օիլ քորփորեյշն», «Սիփիէս օիլ», «Ֆլեշ» ՍՊԸ-ները և «Մաքս Պետրոլ» ՓԲԸ-ն, որոնց մասնաբաժինն ընդհանուր իրացման ծավալում կազմել է շուրջ 93%:

Հանձնաժողովն արձանագրել է, որ 2018 թվականի հունվարից մինչև 2019 թվականի հոկտեմբեր ընկած ժամանակահատվածում «Բենզին» և «Դիզելային վառելիք» ապրանքային շուկաները, ըստ ներմուծման և իրացման, ունեցել են բարձր կենտրոնացվածության մակարդակ:

Ուսումնասիրության արդյունքում հանձնաժողովի կողմից վեր են հանվել որոշ խնդիրներ, որոնք բացասական ազդեցություն կարող են ունենալ մրցակցային միջավայրի վրա, մասնավորապես՝

- *նավթամթերքի փոխադրություն իրականացնող ընդամենը մեկ լաբորատորիայի առկայությունը, ինչը կարող է հանգեցնել շահերի բախման,*
- *ՌԴ-ից ներկրվող քվոտավորված վառելիքի ձեռքբերման և ներմուծման գործընթացում միջնորդ կազմակերպությունների առկայությունը, ինչն առավելապես բացասաբար է անդրադառնում մեծածախ մակարդակում շրջանառվող վառելիքի մրցակցային միջավայրի վրա,*
- *սահմանված պահանջներին, մասնավորապես՝ վառելիքի մանրածախ իրացման կետերի նկատմամբ սահմանված պահանջներին ոչ համապատասխան ենթակառուցվածքների շահագործումը,*

- *մանրածախ իրացման ոլորտում հնարավոր թերլցումները,*
- *սահմանված պահանջներին ոչ համապատասխան որակի վառելիքի իրացումը:*

Ուսումնասիրության շրջանակում հանձնաժողովի բացահայտած խնդիրները ներկայացվել են ՀՀ կառավարություն:

Հանձնաժողովը համապատասխան մարմինների միջոցով ապահովել է նաև այն խնդիրների կարգավորմանն ուղղված գործողությունների իրականացումը, որոնք թեև գրնվում են այլ մարմինների լիազորությունների շրջանակում, սակայն անուղղակի կերպով իրենց բացասական ազդեցությունն են թողնում «Բենզին» և «Դիզելային վառելիք» ապրանքային շուկաների մրցակցային միջավայրի վրա:

Հանձնաժողովը հնարավոր խնդիրների բացահայտման, ինչպես նաև տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության դրույթների պահպանման նպատակով հարուցել է մի շարք վարչական վարույթներ, այդ թվում՝ բենզինի և դիզելային վառելիքի շրջանառության ոլորտում գործող տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ: Մասնավորապես, հարուցված վարչական վարույթները վերաբերում են՝

- *հնարավոր գերիշխող դիրքի չարաշահմանը՝ այլ գնտրեսվարող սուբյեկտի շուկա մուտք գործելուն խոչընդոտելուն,*
- *հնարավոր գերիշխող դիրքի չարաշահմանը՝ ապրանքի գնի չհիմնավորված բարձրացմանը, իջեցմանը կամ պահպանմանը,*
- *գնումների գործընթացում մրցակցության հնարավոր սահմանափակմանը:*

«Սեղմված գազ» ապրանքային շուկայի ուսումնասիրություն[18]

«Սեղմված գազ» ապրանքային շուկայի ուսումնասիրությունն իրականացվել է 2018 թվականի և 2019 թվականի հունվար-մայիս ընկած ժամանակահատվածի տվյալների հիման վրա:

Սեղմված գազի իրացումը ՀՀ-ում իրականացվում է 2 փուլով՝

- *Մեծածախ վաճառք, որն իրականացվում է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի միջոցով: Վերջինս հանդիսանում է բնական մենաշնորհ՝ համաձայն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի տված գազամատակարարման համակարգի օպերատորի (թիվ 0110) լիցենզիայի,*
- *մանրածախ վաճառք, որն իրականացնում են 357 ավտոգազալիցքավորման ճնշակայաններ շահագործող շուրջ 344 տնտեսավարող սուբյեկտներ:*

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ սեղմված բնական գազի իրացման շուկայում չկան գերիշխող դիրք ունեցող ընկերություններ, և ոլորտում կենտրոնացվածության մակարդակը ցածր է:



18 *«Սեղմված գազ» ապրանքային շուկայի ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ հրապարակման ենթակա տեղեկատվությունը զետեղված է ՀՀ ՏՄՊՊՀ պաշտոնական ինտերնետային կայքում՝ http://www.competition.am/uploads/resources/CompressedGaz_commoditymarket.pdf հղմամբ:*

2019 թվականի հունվար-ապրիլ ընկած ժամանակահատվածում գազի ձեռքբերման և իրացման 22%-ը բաժին է ընկնել Երևան քաղաքին, 14%-ը ՝ Արարատի մարզին, իսկ 12%-ը ՝ Կոտայքի մարզին:



Ուսումնասիրություն է իրականացվել նաև գազի գնագոյացման վերաբերյալ, և 2019 թվականի տվյալներով՝ 1 կգ սեղմված գազի ընդհանուր գնագոյացման մեջ ծախսերի հիմնական մասը՝ շուրջ 46%-ը, կազմում է գազի ձեռքբերման գինը, 30%-ը ՝ հարկերը, 15.5%-ը ՝ այլ ծախսերը և 8.5%՝ շահույթը:

Ոլորտը կարգավորող իրավական դաշտի ուսումնասիրությունից պարզ է դարձել՝

- *ԱԳԼՃԿ-ների ոլորտում գործունեության իրականացման համար չկան մուտքի խոչընդոտներ,*
- *ոչ բոլոր տնտեսավարող սուբյեկտներն են պահպանում անվտանգության կանոններից բխող պահանջները:*

Ուսումնասիրության արդյունքում բացահայտված խնդիրների առնչությամբ հանձնաժողովը դիմել է ՀՀ կառավարություն՝ խնդրելով հանձնարարել նշված ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմիններին քայլեր ձեռնարկել նմանատիպ խնդիրները բացառելու ուղղությամբ, ինչպես նաև ՀՀ պետական եկամուտների կոմիտե է ներկայացրել ուսումնասիրության արդյունքները՝ անհրաժեշտության դեպքում համապատասխան գործողություններ ձեռնարկելու նպատակով:

Գազասպասարկման ոլորտի ուսումնասիրություն

Հանձնաժողովն ուսումնասիրել է ՀՀ-ում գազատարների, գազասպառման համակարգերի, արտադրական վտանգավոր օբյեկտների տեխնիկական շահագործման և սպասարկման ծառայությունների մատուցման ոլորտը, ինչպես նաև դրանց նկատմամբ վերահսկողության դաշտը:

Գազի տնտեսություններում տեխնիկական շահագործման և սպասարկման ծառայությունների մատուցման ոլորտում առանձնացվել են հետևյալ ապրանքային շուկաները՝

- *Բնակելի շենքերի բնակարանների, բնակելի շենքերում տեղակայված կազմակերպությունների և առանձնատների ներքնային գազասպառման համակարգերի տեխնիկական շահագործման և սպասարկման ծառայությունների մատուցում,*
- *Կազմակերպությունների գազասպառման համակարգերի տեխնիկական շահագործման և սպասարկման ծառայությունների մատուցում (բացառություն են կազմում բնակելի շենքերի բնակարանների, բնակելի շենքերում տեղակայված կազմակերպությունների և առանձնատների ներքնային գազասպառման համակարգերը՝ բացառությամբ ԱԳԼՃԿ-ների և ԱԳԼԿ-ների),*
- *ԱԳԼԿ-ների և ԱԳԼՃԿ-ների գազասպառման համակարգերի շահագործում և տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցում,*
- *Մեքենաների (գազաբալոնային շարժիչով), շարժական գազալիցքավորող մեքենաների (բնական գազ, հեղուկ գազ) տեխնիկական անվտանգության ապահովման ծառայությունների մատուցում:*

Ուսումնասիրության ընթացքում գնահատվել են դիտարկված ապրանքային շուկաների կենտրոնացվածության աստիճանները:



Դիտարկված ապրանքային շուկաներից երեքը բարձր կենտրոնացված շուկաներ են:

Հանձնաժողովն ուսումնասիրության արդյունքները ներկայացրել է ՀՀ կառավարություն, առաջարկելով՝

- *ազատականացնել ներտնային գազասպառման համակարգերի տեխնիկական սպասարկման ոլորտը՝ միաժամանակ ապահովելով անվտանգության նկատմամբ վերահսկողությունը,*
- *իրականացնել ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտի համապատասխան փոփոխություններ, ինչի արդյունքում ներտնային գազասպառման համակարգերի տեխնիկական սպասարկման ծառայությունների ոլորտում կառաջանա մրցակցություն. ոլորտում գործունեություն ծավալելու հնարավորություն կստանան այլ հետաքրքրված սուբյեկտներ, և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից սպասարկումն իրականացնող ընկերության ընտրությունը կկատարվի օբյեկտիվ և մրցակցային սկզբունքով,*
- *ոլորտում գործունեություն իրականացնող հետաքրքրված սուբյեկտների նկատմամբ սահմանել և կիրառել հստակ պահանջներ և չափորոշիչներ,*
- *չափորոշիչների պահպանման և ծառայությունների պատշաճ իրականացման նկատմամբ ապահովել պետական վերահսկողություն,*
- *կարգավորող հանձնաժողովի կողմից սահմանել այնպիսի իրավական կարգավորումներ, որոնց համաձայն կհստակեցվեն ներտնային գազի սպասարկման ծառայությունների իրականացման ոլորտին առնչվող բոլոր պարտավորություններն ու իրավունքները, ինչպես նաև նշված ծառայության ձեռքբերման գործընթացը կհամապատասխանեցվի «Գնումների մասին» օրենքի պահանջներին,*
- *անվտանգության կամ հետաքրքրված սուբյեկտների նկատմամբ վերահսկողության նկատառումներից ելնելով՝ ներտնային գազասպառման համակարգերի տեխնիկական սպասարկման ծառայությունների իրականացման պարտավորությունը «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ին վերապահելու և նշված աշխատանքների իրականացումը Հանձնաժողովի պայմանագրով վերջինիս կողմից այլ հետաքրքրված սուբյեկտին հանձնարարելու պարագայում սահմանել այնպիսի կարգավորումներ, որոնց համաձայն «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից սպասարկումն իրականացնող ընկերության ընտրությունը կկատարվի մրցակցային եղանակով:*

Կոնյակի շրջանառության ոլորտի ուսումնասիրություն[19]

2019 թվականի հունվարի 1-ից մինչև հոկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում Հայաստան է ներմուծվել 725 լիտր կոնյակ (100% սպիրտ) և 2 323 056 լիտր կոնյակի սպիրտ (100% սպիրտ): Կոնյակի ներմուծման ծավալները 2018 թվականի նույն ժամանակահատվածի նկատմամբ կրճատվել են 27%-ով, իսկ կոնյակի սպիրտի ներմուծման ծավալները՝ ավելացել շուրջ 55%-ով:

2019 թվականի հունվարի 1-ից մինչև հոկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում կոնյակի ներմուծման ամենամեծ մասնաբաժինն ունեցող երեք ընկերություններն են «Սարգիս Կարոլինա» ՍՊԸ-ն, «Էյ Դի Էֆ Շոփս» ՓԲԸ-ն և «Ալֆա Ֆուդ Սերվիս» ՍՊԸ-ն, որոնց ընդհանուր մասնաբաժինը կոնյակի ներմուծման մեջ կազմել է 90%, 2018 թվականին՝ «Սարգիս Կարոլինա» ՍՊԸ-ն, «Էյ Դի Էֆ Շոփս» ՓԲԸ-ն և «Արտէքսիմ» ՍՊԸ-ն, որոնց ընդհանուր մասնաբաժինը կոնյակի ներմուծման մեջ կազմել է 86%:



19 Կոնյակի շրջանառության ոլորտի ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ հրապարակման ենթակա տեղեկատվությունը զետեղված է ՀՀ ՏՄՊՊՀ պաշտոնական ինտերնետային կայքում՝ http://www.competition.am/uploads/resources/Study_cognac.pdf հղմամբ:

Բովանդակություն

2019 թվականի հունվարի 1-ից մինչև հոկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում կոնյակի սպիրտի առաջին երկու խոշոր ներմուծողներն են եղել «Բագրատ Գրուպ» ՍՊԸ-ն և «Արտաշատ Վինկոն» ՓԲԸ-ն, որոնք ներմուծել են կոնյակի սպիրտի ընդհանուր ծավալների շուրջ 90%-ը, 2018 թվականին կոնյակի սպիրտի ներմուծման մեջ ամենամեծ տեսակարար կշիռն են ունեցել «Վեդի Ալկո», «Արտաշատ Վինկոն» ՓԲԸ-ները և «Պռոշյանի կոնյակի գործարան» ՍՊԸ-ն՝ ընդհանուր՝ 71%:



2019 թվականի առաջին կիսամյակի ընթացքում արտադրվել է 5 220 793 լիտր (100% սպիրտ) կոնյակ 21 ընկերության կողմից: Կոնյակ արտադրող առաջին երեք խոշոր ընկերություններն են՝ «Երևանի Արարատ կոնյակի-գինու-օղու կոմբինատ» ԲԲԸ-ն, «Երևանի կոնյակի գործարան» ՓԲԸ-ն և «Պռոշյանի կոնյակի գործարան» ՍՊԸ-ն, որոնց ընդհանուր մասնաբաժինը կոնյակի արտադրության մեջ կազմել է 62%՝ 2018 թվականի 68%-ի փոխարեն: Նշված ընկերությունները նաև առավել խոշոր կոնյակ արտահանողների եռյակում են, որոնց մասնաբաժինների գումարը 2019 թվականի տասն ամիսների ընթացքում կազմել է 45%՝ 2018 թվականի 52%-ի դիմաց:



Ընդհանուր առմամբ՝ 2019 թվականի տասն ամիսների ընթացքում արտահանվել է շուրջ 12 000 000 լիտր կոնյակ (100% սպիրտ) 38 ընկերության կողմից, իսկ 2018 թվականի նույն ժամանակահատվածի ընթացքում՝ շուրջ 9 000 000 լիտր կոնյակ (100% սպիրտ) 33 ընկերության կողմից: Այսինքն՝ կոնյակի արտահանման ծավալներն աճել են 37%-ով՝ միաժամանակ գերազանցելով նաև 2018 թվականի ամբողջ տարվա ցուցանիշը (11 000 000 լիտր):

Նույն ժամանակահատվածում արտահանվել է շուրջ 12 000 000 լիտր կոնյակի սպիրտ (100% սպիրտ) 14 ընկերության կողմից, ինչը հավասար է 2018 թվականի ամբողջ տարվա ընթացքում արտահանված կոնյակի սպիրտի ծավալներին:

Հանձնաժողովը հաշվարկել է նաև 1 լիտր կոնյակի ստացման համար անհրաժեշտ նյութածախսը: Հատկանշական է, որ տնտեսվարող սուբյեկտների՝ հանձնաժողով ներկայացրած տեղեկատվության ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ մի շարք դեպքերում 3 տարվա հնացման 0,5 լիտր տարողությամբ կոնյակի նյութածախսը զգալիորեն տարբերվել է հանձնաժողովի հաշվարկած ցուցանիշից, ինչը կարող է վկայել հնարավոր անբարեխիղճ գործողությունների մասին:

Հանձնաժողովն արձանագրել է, որ թեև կոնյակի շրջանառության ոլորտը համարվում է բարձր կենտրոնացվածություն ունեցող, այդուհանդերձ, շուկայի կենտրոնացվածության մակարդակը գնահատող որոշ ինդեքսների արժեքները կրճատվել են:

Ուսումնասիրության շրջանակում հանձնաժողովն իրականացրել է նաև կոնյակ արտադրող տնտեսվարող սուբյեկտների պահեստավորած կոնյակի սպիրտի պաշարների գույքագրում, ինչպես նաև դիտարկել է 2019 թվականի մթերման գործընթացը: Հարկ է նշել, որ ուսումնասիրության արդյունքում մթերում իրականացնող տնտեսվարող սուբյեկտները ճշգրտել են իրենց նախնական տրամադրած ցուցանիշները:

Կոնյակի շրջանառության ոլորտի ուսումնասիրության արդյունքում հանձնաժողովի կողմից վեր են հանվել մի շարք խնդիրներ, մասնավորապես՝

- *կոնյակի արտադրություն և ներմուծում իրականացնելու համար սահմանված 10 մլն դրամ պետական տուրքի հնարավոր բացասական ազդեցությունը կոնյակի շրջանառության ոլորտի մրցակցային միջավայրի վրա,*
- *մի շարք արտադրողների կողմից շշալցվող սպիրտային խմիչքների (հայկական հատուկ խմիչք, հայկական օրիգինալ խմիչք, հայկական թունդ խմիչք և այլն) նույնացումը հայկական կոնյակի հետ,*
- *որոշ տնտեսվարող սուբյեկտների կողմից կոնյակի արտադրության նպատակով ոչ հայկական սպիրտների հնարավոր օգտագործումը,*
- *«Խաղողի հումքով ոգելից խմիչքների մասին» օրենքով հայկական կոնյակի արտադրության մասով առկա հստակ կարգավորումների և մի շարք պահանջների կատարման նկատմամբ պատշաճ վերահսկողության իրականացման մեխանիզմների բացակայությունը,*
- *գինեգործական արտադրանքի իզոտրոպային բաղադրության տվյալների ազգային բանկի վարման փաստացի անհնարինությունը:*

4. Օրենսդրական աշխատանքներ

ՀՀ ՏՄՊՊՀ գործունեության 19 տարիների ընթացքում «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքը մշտապես լրամշակվել է՝ վերափոխելով հանձնաժողովի գործիքակազմը, կատարելագործելով տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության նկատմամբ վերահսկողության կառուցակարգերը:

2015 թվականի դեկտեմբերի 6-ին ընդունված ՀՀ Սահմանադրությամբ առաջին անգամ սահմանադրորեն ամրագրվել է ՀՀ ՏՄՊՊՀ՝ որպես ինքնավար մարմնի կարգավիճակը և ձևավորման կարգը՝ էականորեն բարձրացնելով հանձնաժողովի անկախության երաշխիքները: Ազատ տնտեսական մրցակցությունը սահմանվել է որպես սահմանադրական սկզբունք, սահմանադրությամբ ամրագրված տնտեսական կարգի հիմք, ինչպես նաև գերիշխող կամ մենաշնորհ դիրքի չարաշահման, հակամրցակցային համաձայնությունների արգելքին ավելացվել է նաև անբարեխիղճ մրցակցության արգելքը:

Հանձնաժողովի ձևավորումից ի վեր գործունեության կարգի փոփոխության, նոր ինստիտուտների ներդրման առումով ամենակարևոր փոփոխությունները թերևս տեղի են ունեցել 2018 և 2019 թվականների՝ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի փոփոխություններով:

Մասնավորապես, 2018 թվականի մարտի 23-ին ընդունված «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի փոփոխություններով Օրենքը համապատասխանեցվել է ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված հանձնաժողովին վերաբերող իրավակարգավորումներին, ԵԱՏՄ պայմանագրին և ԵՄ լավագույն փորձին:

2019 թվականի սեպտեմբերի 13-ին ընդունված «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի փոփոխություններով հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունքը վերապահվել է ՀՀ Ազգային ժողովի կառավարող, ընդդիմադիր խմբակցություններին, ՀՀ կառավարությանը, որպիսի իրավունքը նախկին կարգավորումների համաձայն՝ բացառապես վերապահված էր ՀՀ վարչապետին:

Վերը նկարագրված օրենսդրական բարեփոխումներն էականորեն ամրապնդել են հանձնաժողովի և վերջինիս անդամների անկախության երաշխիքները, ինչը հնարավորություն է տվել որոշումներ կայացնելիս չկաշկանդվել կոնկրետ անձի կամ ուժի քաղաքական, խմբային կամ անձնական շահերով:

2019 թվականին ՀՀ Ազգային ժողովում տեղի են ունեցել ՀՀ ՏՄՊՊՀ նախագահի և անդամների ընտրություններ[20], ինչի արդյունքում փաստացի ամբողջությամբ վերափոխվել է հանձնաժողովի կազմը:

Օրենսդրական բարեփոխումներ

«Համաշխարհային բանկի խումբ – ԵՄ գործընկերության առաջարկ. 2017-2020 թվականներին Հայաստանին միասնական աջակցության շրջանակ. տնտեսական կառավարում», ինչպես նաև «Զարգացման քաղաքականության գործառնություն» ծրագրերի շրջանակներում Համաշխարհային բանկի և ԵՄ պատվիրակության ներկայացուցիչների հետ ակտիվ համագործակցության միջոցով հանձնաժողովը մշակել, Կառավարության և Ազգային ժողովի քննարկմանն է ներկայացրել «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որով ՀՀ ստանձնած պարտավորություններին համապատասխան հստակեցվել և լրամշակվել է «պետական օժանդակություն» հասկացությունը, սահմանվել է «պետական օժանդակություն տրամադրող մարմին» հասկացությունը, պետական օժանդակությունների վերաբերյալ գրանցամատյան վարելու պահանջը, տրամադրված պետական օժանդակության վերաբերյալ տեղեկատվության ներկայացման պարտավորությունը և կարգը, հանձնաժողովի լիազորությունները տվյալ ոլորտում:

Նախագիծն ընդգրկվել է Ազգային ժողովի հերթական նիստերի օրակարգում, 2019 թվականի դեկտեմբերի 4-ին ընդունվել է առաջին ընթերցմամբ:

20 ՀՀ ՏՄՊՊՀ նախագահը նշանակվել է 2019 թվականի ապրիլի 23-ին, հանձնաժողովի անդամներից 4-ը նշանակվել են 2019 թվականի մայիսի 31-ին, 2-ը՝ 2019 թվականի հունիսի 28-ին:

Միջպետական օրենսդրություն

2019 թվականին շարունակվել են ԵԱՏՄ օրենսդրության կատարելագործմանն ուղղված աշխատանքները, որոնց շրջանակներում հանձնաժողովի ներկայացուցիչների մասնակցությամբ իրականացվել են բազմաթիվ քննարկումներ, այդ թվում՝ տեսահամաժողովների ձևաչափով: ԵԱՏՄ օրենսդրության մրցակցության դրույթների քննարկվող փոփոխություններն ու լրացումները վերաբերում են ինչպես Եվրասիական տնտեսական միության մասին 2019 թվականի մայիսի 29-ի պայմանագրի և դրա «Արձանագրություն մրցակցության ընդհանուր սկզբունքների և կանոնների վերաբերյալ» վերտառությամբ 19-րդ հավելվածի նորմերին, այնպես էլ Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի հիման վրա ընդունված նորմատիվ իրավական մի շարք այլ ակտերին, մասնավորապես՝ «Անդրսահմանային շուկաներում մրցակցության ընդհանուր կանոնների խախտման վերաբերյալ դիմումների (նյութերի) քննարկման», «Անդրսահմանային շուկաներում մրցակցության ընդհանուր կանոնների խախտումների քննության», «Մրցակցության ընդհանուր կանոնների խախման մասին գործերի քննարկման», «Անդրսահմանային շուկաներում մրցակցության ընդհանուր կանոնների խախտումների համար տուգանքների հաշվարկման մեթոդաբանության և նշանակման» կարգերին:

Հանձնաժողովը ««Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից մրցակցության միասնական կանոնների պահպանման նկատմամբ հսկողության լիազորություններն իրականացնելիս գաղտնի տեղեկատվության պաշտպանության կարգի և դրա հրապարակման համար պատասխանատվության մասին» 2014 թվականի նոյեմբերի 12-ի համաձայնագրին միանալու մասին» արձանագրությունը վավերացնելու մասին» օրենքի նախագիծը և «Միջազգային պայմանագրերի մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված փաստաթղթերը 2019 թվականի դեկտեմբերի 4-ին ներկայացրել է ՀՀ կառավարություն: Կառավարությունը դիմել է ՀՀ սահմանադրական դատարան միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրության համապատասխանության հարցը որոշելու համար:

Ավարտվել են ««Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից մրցակցության միասնական կանոնների պահպանման նկատմամբ հսկողության լիազորություններն իրականացնելիս գաղտնի տեղեկատվության պաշտպանության կարգի և դրա հրապարակման համար պատասխանատվության մասին» 2014 թվականի նոյեմբերի 12-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրության նախագծի ստորագրման համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը:

Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենսդրության համապատասխանության վերաբերյալ եզրակացությունների տրամադրումը

Հանձնաժողովը, կիրառելով Օրենքի 16.2-րդ հոդվածով սահմանված՝ պետական մարմինների կողմից ընդունված իրավական ակտերի և ստորագրված պայմանագրերի փորձաքննություն իրականացնելու իրավասությունը, տրամադրել է եզրակացություններ շուրջ 70 նորմատիվ իրավական ակտերի, 3 օրենքի և 1 պայմանագրի նախագծերի վերաբերյալ:

Դրանց թվում են՝

«Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին» օրենքի նախագիծը, որով նախատեսվում է արգելել

ծխախոտի, ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների իրացման ընթացքում զեղչերի կիրառումը, հրապարակային ցուցադրումը վաճառասրահներում, վաճառքը բժշկական, կրթական և մանկապատանեկան հաստատություններից ոչ պակաս, քան 10 մետր հեռավորության վրա, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների շենքների ներսում և այլն:

Ուսումնասիրելով նախագծով սահմանված իրավակարգավորումները, իրականացնելով համեմատաիրավական վերլուծություն և ուսումնասիրելով միջազգային իրավակիրառ փորձը՝ հանձնաժողովը եզրակացություն[21] է տվել առ այն, որ նախագծով սահմանված կարգավորումները կարող են սահմանափակել տնտեսական մրցակցությունը, սակայն բխում են հանրային շահի պաշտպանությունից և չեն կարող դիտարկվել որպես տնտեսական մրցակցության օրենադրությանը հակասող դրույթներ:

«Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որով նախատեսվում էր պետական տուրք սահմանել նաև ՀՀ-ում արտադրված ԱՏԳ ԱԱ 7201 7204 ծածկագրերին դասվող ապրանքների վրա:

Իրականացնելով բազմակողմանի ուսումնասիրություն, կազմակերպելով աշխատանքային քննարկումներ ոլորտի մասնակից տնտեսվարող սուբյեկտների հետ և կատարելով ստացված տեղեկատվության ուսումնասիրություն՝ հանձնաժողովը տվել է եզրակացություն[22] առ այն, որ նախագծում սև մետաղի ջարդոնի արտահանման համար պետական տուրքի դրույքաչափը, ինչպես նաև ՀՀ-ում արտադրված ԱՏԳ ԱԱ 7201 և 7204 ծածկագրերին դասվող ապրանքների վրա պետական տուրքի տարածումը, առաջարկից և պահանջարկից ելնելով, կարող է ձևավորել ձեռքբերման ցածր գին և շուկայում սահմանափակել մրցակցությունը: Առաջարկվել է նաև հնարավորության դեպքում տարբերակել պետական տուրքի չափը՝ ըստ սև մետաղի ջարդոնի տեսակի, ինչը հնարավորություն կտա սահմանափակել սև մետաղի ջարդոնի այն տեսակների արտահանումը, որոնք պահանջարկ ունեն երկրի ներսում և վերամշակվում են, միևնույն ժամանակ պայմաններ ստեղծել արտահանելու այն տեսակները, որոնք երկրի ներսում չեն վերամշակվում և պահանջարկ չունեն:

«Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որով առաջարկվում է օդի տուրքից 36 ամսով ազատել այն քաղաքացիներին (տրամադրված ժամկետը կարող է երկարացվել ևս 24 ամսով), որոնք օգտվում են դեպի վերջին 12 ամիսներին չսպասարկված IATA կոդով նոր օդանավակայաններ առևտրային ավիափոխադրումներ իրականացնող ընկերությունների ավիափոխադրումներից, իրականացնում են IATA ամառային ժամանակաշրջանում շաբաթական ոչ պակաս, քան 2 և IATA ձմեռային ժամանակաշրջանում ոչ պակաս, քան 1 չվերթ:

Հանձնաժողովը, գնահատելով նախագծի պետական օժանդակություն հանդիսանալու հանգամանքը, դիտարկելով ավիացիայի ոլորտում տրամադրվող պետական օժանդակության գնահատման միջազգային լավագույն փորձը և իրականացնելով բազմակողմանի ուսումնասիրություն, տվել է եզրակացություն[23] առ այն, որ նախագծով սահմանված արտոնությունը չի կարող բացասական ազդեցություն ունենալ ավիացիայի ոլորտում տնտեսական մրցակցության ընդհանուր վիճակի վրա:

«Գրանդ Դիլինգ» ընկերության մատակարարման գլխավոր պայմանագրի նախագիծը, որով սահմանվելու է մատակարարի կողմից տնտեսվարող սուբյեկտին որոշակի ժամանակահատվածի համար մատակարարման ենթակա խմբաքանակը՝ հիմք ընդունելով յուրաքանչյուր դեպքում կոնկրետ տնտեսվարող սուբյեկտի վաճառքի համար անհրաժեշտ ծավալը և մյուս էական պայմանները:

21 ՀՀ ՏՄՊՊՀ 2019 թվականի օգոստոսի 14-ի թիվ 97-Ա որոշում:
22 ՀՀ ՏՄՊՊՀ 2019 թվականի հուլիսի 10-ի թիվ 81-Ա որոշում:
23 ՀՀ ՏՄՊՊՀ 2019 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ 124-Ա որոշում:

Հանձնաժողովը, փորձաքննության ենթարկելով փաստաթղթի նախագիծը, ներկայացրել է եզրակացություն[24] առ այն, որ «Գրանդ Դիլինգ» ՍՊԸ մատրակարարման գլխավոր պայմանագրի նախագծով նախատեսված կարգավորումները չեն համապատասխանում փնտրեսական մրցակցության պաշտպանության մասին օրենսդրությանը և կարող են սահմանափակել փնտրեսական մրցակցությունը:

ՀՀ ՏՄՊՊՀ որոշումների դատական բողոքարկման ընթացքը 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

23
ընթացիկ դատական գործեր

2 վճռաբեկ
8 վերաքննիչ
13 վարչական

2019 թվականի ընթացքում՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերով ավարտվել են 9 դատական գործեր, որոնցից

9
ավարտված դատական գործեր

7 դատական գործերի արդյունքում ՀՀ ՏՄՊՊՀ 7 որոշում մնացել է ուժի մեջ.
6 անբարեխիղճ մրցակցության գործողության և 1 փնտրեավարող սուբյեկտի՝ տեղեկատվության չտրամադրման վերաբերյալ

2 դատական գործերի արդյունքում անվավեր է ճանաչվել ՀՀ ՏՄՊՊՀ 2 որոշում՝
1 անբարեխիղճ մրցակցության գործողության և 1 ՀՀ ՏՄՊՊՀ աշխատակցին օրենսդրությամբ վերապահված իրավունքների կամ պարտականությունների կատարմանը խոչընդոտելու վերաբերյալ

24 ՀՀ ՏՄՊՊՀ 2019 թվականի նոյեմբերի 26-ի թիվ 183-Ա որոշում:

5. Հանրային իրազեկում

Հանրության հետ պրոակտիվ հաղորդակցությունը, իրազեկման մակարդակի բարձրացմանն ուղղված աշխատանքների իրականացումը մրցակցային մարմինների գործունեության արդյունավետության ապահովման կարեվորագույն երաշխիքներից են, քանի որ հանրային վերահսկողությունը, իրենց իրավունքներին քաջատեղյակ և պահանջատեր սպառողներն ու տնտեսվարողները տնտեսական մրցակցության օրենսդրության խախտումների բացահայտման և կանխարգելման, ազատ և բարեխիղճ մրցակցության միջավայրի ստեղծման և մշակույթի տարածման ու խրախուսման գործում ունեն վճռորոշ դերակատարություն:

Անհրաժեշտ է արձանագրել, որ թեև հանձնաժողովի գործունեության նախորդ տարիների ընթացքում քաղաքացիների և տնտեսվարողների շրջանում իրազեկվածությունն ընդհանուր առմամբ աճել է, սակայն դեռևս հանրության մի ստվար զանգված մրցակցության օրենսդրության, հանձնաժողովի գործառույթների վերաբերյալ ունի թյուր պատկերացումներ կամ առհասարակ տեղեկացված չէ:

Միաժամանակ էական է նաև մարմնի նկատմամբ հանրային վստահության բարձրացման, համագործակցային մթնոլորտի ստեղծման գործոնը: Ուշագրավ է, որ 2019 թվականին նախորդ տարվա համեմատությամբ էականորեն աճել է քաղաքացիների և տնտեսվարողների դիմում-բողոքների հիման վրա հարուցած վարույթների թվաքանակը, ինչը խոսում է հանձնաժողովի նկատմամբ վստահության ավելացման մասին:

Այս համատեքստում առավել քան կարևորվում է հանձնաժողովի բաց, թափանցիկ, հաշվետու և հրապարակային գործելաոճի ապահովումը, նրա գործառույթների, գործունեության վերաբերյալ պրոակտիվ հանրային իրազեկումը, որի ուղղությամբ 2019 թվականին իրականացվել են մի շարք աշխատանքներ.

- *հանձնաժողովի գործունեության և գործառույթների վերաբերյալ հանրության իրազեկելու*

նպատակով պատրաստվել է կարճ տեսաֆիլմ[25], որում ներկայացվում է նրա պատմությունը, առաքելությունն ու տեսլականը,

- *պատրաստվել և հրապարակվել են տեղեկատվական թերթիկներ ՀՀ ՏՄՊՊՀ ստեղծման, գործառույթների, հիմնական խնդիրների և նպատակների մասին,*
- *հաշվի առնելով այն հանգամանքը, որ չհայտարարագրված համակենտրոնացումները մեծ մասամբ օրենսդրական կարգավորումների վերաբերյալ տնտեսավարողների իրազեկվածության պակասի հետևանք են՝ այդ թեմայով պատրաստվել է իրազեկման անիմացիոն հոլովակ[26],*
- *մրցակցության միջազգային օրվան ընդառաջ 2019 թվականի նոյեմբերի 20-ին Երևանում կազմակերպվել է «Արդյունավետ մրցակցության ապահովումը թվայնացվող աշխարհում» թեմայով համաժողով և ապահովվել դրա լուսաբանումը, որին մասնակցել են ՀՀ փոխվարչապետ Տիգրան Ավինյանը, Կառավարության այլ բարձրաստիճան պաշտոնյաներ, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Մրցակցության, հակամենաշնորհային կարգավորման հարցերով կոլեգիայի անդամ (նախարար) Սերիկ Ժումանգարինի գլխավորած պատվիրակությունը, տնտեսավարողներ, միջազգային կազմակերպությունների, ՀԿ-ների ներկայացուցիչներ, պաշտոնատար այլ անձինք: Պատրաստվել և հրապարակվել է իրազեկման թերթիկ մրցակցության օրվա վերաբերյալ,*
- *հանրության հետ հետադարձ կապը դյուրացնելու, ինչպես նաև թողարկվող տեղեկատվական նյութերի առավել լայն և թիրախային իրազեկումն ապահովելու նպատակով ստեղծվել է ՀՀ ՏՄՊՊՀ էջը «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում[27],*
- *տնտեսական մրցակցության պաշտպանությանն առնչվող հանրային հետաքրքրություն ներկայացնող թեմաների շուրջ պատրաստվել և զանգվածային լրատվության միջոցներով տարածվել է շուրջ 40 հաղորդագրություն:*

25 Տեսաֆիլմը հասանելի է հետևյալ հղմամբ՝ www.youtube.com/watch?v=EQ2Rt_iOnCU:

26 Հոլովակը հասանելի է հետևյալ հղմամբ՝ www.youtube.com/watch?v=As6efjC-88c:

27 ՀՀ ՏՄՊՊՀ ֆեյսբուքյան էջը՝ www.facebook.com/ՀՀ-տնտեսական-մրցակցության-պաշտպանության-պետական-հանձնաժողով-2054379814857561/

Տեղեկատվական և կրթական գործառույթներ

ՀՀ ՏՄՊՊՀ-ն կարևորում է կրթական հաստատությունների, մասնավորապես՝ մասնագիտական բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ համագործակցության ակտիվացումն ու շրջանակի ընդլայնումը՝ առաջնորդվելով մրցակցության պաշտպանության ոլորտում զարգացման միտումներին համընթաց քայլելու, գիտականորեն հիմնավորված որոշումների կայացման, ինչպես նաև բուհից աշխատաշուկա անցումն ավելի սահուն դարձնելու անհրաժեշտությամբ:

Այդ նպատակով 2019 թվականին համագործակցության հուշագրեր են կնքվել Հայաստանում ֆրանսիական համալսարանի և Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի հետ:

Կնքված հուշագրերի շրջանակներում ՀՀ ՏՄՊՊՀ-ն ու բուհերը կհամագործակցեն հետևյալ ուղղություններով՝

- *ուսանողների, դասախոսների մասնակցությամբ ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հետազոտական, վերլուծական աշխատանքների իրականացում,*
- *հանդիպումների, դասախոսությունների կազմակերպում,*
- *համապատեղ կլոր սեղանների, գիտաժողովների կազմակերպում,*
- *թեմատիկ սեմինարների, դպրահաղերի և գիտագործնական այլ միջոցառումների անցկացում:*

Բացի այդ, նախատեսվում է կազմակերպել ուսանողների այցելություններ հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումներ, նրանց հնարավորություն ընձեռել արտադրական պրակտիկա անցնել ՀՀ ՏՄՊՊՀ-ում, ներգրավել որպես փորձնակ:

2019 թվականին ՀՀ ՏՄՊՊՀ-ն համագործակցության դրական փորձ է ունեցել Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հետ «Կարագ» ապրանքային շուկայի ուսումնասիրության շրջանակում:

6. Համագործակցություն այլ մարմինների հետ

ՀՀ ՏՄՊՊՀ-ն սերտ համագործակցում է ՀՀ տարբեր գործընկեր մարմինների հետ բազմաթիվ ոլորտներում տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության կիրարկման և քաղաքականության իրականացման, բարեխիղճ և ազատ մրցակցության համար անհրաժեշտ միջավայրի ապահովման, սպառողների շահերի պաշտպանության նպատակով:

Առանձնակի կարևորվում է Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի (ԱՀ ՀԾՏՄԿՊՀ) հետ համագործակցությունը, որն իրականացվում է փորձի փոխանակման նպատակով ՀՀ ՏՄՊՊՀ կազմակերպած քննարկումներին, սեմինարներին, միջազգային համաժողովներին և այլ միջոցառումներին ԱՀ ՀԾՏՄԿՊՀ աշխատակիցների մասնակցության, հավաքագրված տեղեկատվության պարբերական փոխանակման, սոցիալական նշանակության ապրանքային շուկաներում իրականացվող ուսումնասիրությունների ընթացքում մեթոդական և տեղեկատվական աջակցության տրամադրման, աշխատակիցների մասնագիտական կարողությունների զարգացման խթանման ուղղություններով, ինչպես նաև տեղի են ունեցել ՀՀ ՏՄՊՊՀ և ԱՀ ՀԾՏՄԿՊՀ նախագահների և աշխատակիցների փոխադարձ այցեր, հաստատվել է աշխատանքային ծրագիր երկու մարմինների միջև ավելի սերտ համագործակցություն շարունակելու նպատակով:

7. Միջազգային համագործակցություն

ՀՀ ՏՄՊՊՀ-ն իր գործունեության մեջ առանձնակի տեղ է հատկացնում միջազգային կապերի ամրապնդմանը և միջազգային կազմակերպությունների և արտերկրի համանման կառույցների հետ համագործակցության սերտացմանը: Հանձնաժողովը 2019 թվականի ընթացքում

ակտիվ մասնակցել է միջազգային համաժողովների, սեմինարների, ամրապնդել է միջազգային կառույցների և արտերկրի գործընկերների հետ համագործակցությունը՝ մրցակցության զարգացմանը խոչընդոտող արդի խնդիրների քննարկման, միջազգային չափորոշիչներին համապատասխան մոտեցումներ որդեգրելու, կադրային ներուժի հզորացման, կարողությունների զարգացման և որակավորման բարձրացման, միջազգային փորձի ուսումնասիրության և առաջավոր փորձի ներդրման, երկկողմ ու բազմակողմ հարաբերությունների ընդլայնման ուղղություններով:

Միևնույն ժամանակ միջազգային համագործակցությունը շարունակվել է նաև վերապատրաստման դասընթացների, գործերի ուսումնասիրության ընթացքում օտարերկրյա փորձագետների ներգրավման, փորձի և տեղեկատվության փոխանակման ուղղություններով:

Բազմակողմ համագործակցություն

ԵԱՏՄ

ՀՀ ՏՄՊՊՀ-ն 2019 թվականին շարունակել է ակտիվ համագործակցել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հետ անդրսահմանային շուկաներում մրցակցության ընդհանուր կանոնների խախտման առնչությամբ իրականացվող վարույթների շրջանակում, 2014 թվականի մայիսի 29-ի «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի մրցակցությանն առնչվող դրույթների, ինչպես նաև իրավապայմանագրային բազայի կատարելագործման ուղղություններով: Համագործակցությունն իրականացվել է պարբերաբար անցկացվող տեսահամաժողովների, խորհրդակցությունների, ինչպես նաև ԵԱՏՄ անդամ պետությունների հակամենաշնորհային/մրցակցային մարմինների ղեկավարների և ԵՏՀ մրցակցության և հակամենաշնորհային կարգավորման հարցերով Կոլեգիայի անդամի (Նախարարի) մակարդակով 5+1 ձևաչափով անցկացվող խորհրդակցությունների միջոցով:

2019 թվականին հաստատվել է ԵՏՀ Մրցակցության քաղաքականության, հակամենաշնորհային կարգավորման

և պետական գնային կարգավորման խորհրդատվական կոմիտեի և ենթակոմիտեների նոր կազմը: Խորհրդատվական կոմիտեի աշխատանքների իրականացման շրջանակում ստեղծվել են երկու աշխատանքային խմբեր՝

- *ԵԱՏՄ տարածքում կապի ոլորտում մրցակցության և խոչընդոտների վերացման հարցերով,*
- *դեղամիջոցների, բժշկական սարքավորումների և բժշկական նշանակության արտադրանքի ապրանքային շուկաներում մրցակցության զարգացման հարցերով:*

Խորհրդատվական կոմիտեի նիստերում քննարկվել և հաստատվել են 2020-2021 թվականներին իրականացվելիք գիտահետազոտական աշխատանքների թեմաները: Դրանց տեխնիկական բնութագրերը հաստատելուց հետո հետագայում կհայտարարվեն բաց մրցույթներ, որոնց կարող են հայտ ներկայացնել և մասնակցել անդամ պետությունների բարձրագույն կրթական և հետազոտական հաստատությունները:

Ավարտվել և պաշտպանության է ներկայացվել 2018 թվականին մեկնարկած ՌԴ «Սկոլկովո» տնտեսագիտության բարձրագույն դպրոցի կողմից «Հակամենաշնորհային օրենսդրության խախտման համար պատասխանատվության ենթարկելու և դրանից ազատելու հարցերով ԵԱՏՄ և ԵԱՏՄ անդամ պետությունների օրենսդրության և իրավակիրառ փորձի վերլուծությունը, միջազգային փորձի ուսումնասիրությունը» թեմայով գիտահետազոտական աշխատանքը: Մի շարք քննարկումներից հետո այն հավանության է արժանացել ԵԱՏՄ անդամ պետությունների մրցակցային/հակամենաշնորհային մարմինների կողմից:

Մրցակցության միջազգային օրվան նվիրված «Արդյունավետ մրցակցության ապահովումը թվայնացվող աշխարհում» թեմայով համաժողովի շրջանակներում Երևանում կայացել է ԵՏՀ մրցակցության և հակամենաշնորհային քաղաքականության հարցերով բլոկի հանրային ընդունարանի արտագնա նիստը՝ ԵՏՀ պաշտոնյաների, հայկական արտադրող և արտահանող ընկերությունների, ՀԿ-ների, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ: Նիստի ընթացքում ԵԱՏՄ պաշտոնյաները ՀՀ-ում գործունեություն ծավալող տնտեսվարող սուբյեկտներին տրամադրել են խորհրդատվություն, այդ թվում՝ անհատական, անդրսահմանային շուկաներում մրցակցության ընդհանուր կանոնների խախտման մասին դիմումների ներկայացման գործընթացի վերաբերյալ, ինչպես նաև բարձրաձայնվել և քննարկվել են այն խնդիրները, որոնց հանդիպում են տնտեսվարող սուբյեկտները ԵԱՏՄ անդամ պետությունների շուկաներում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս:

ԱՊՀ

Հանձնաժողովը շարունակել է ԱՊՀ մասնակից պետությունների հետ տարիների ընթացքում ձևավորված սերտ և արդյունավետ համագործակցությունը, ինչպես նաև աշխատանքներ է իրականացրել հակամենաշնորհային քաղաքականության միջպետական խորհրդի և դրա ներքո գործող գովազդի կոորդինացիոն խորհրդի հետ հակամենաշնորհային քաղաքականության և մրցակցության օրենսդրության կիրարկման ոլորտում համագործակցությունը խորացնելու ուղղությամբ: Հանձնաժողովի պատվիրակությունը մասնակցել է ԱՊՀ ՀՔՄԽ հոբելյանական 50-րդ և ԱՊՀ մասնակից պետություններում հակամենաշնորհային օրենսդրության խախտման համատեղ ուսումնասիրությունների շտաբի 36-րդ նիստերին, որտեղ «Բժշկական սարքավորումների ապրանքային շուկաներում մրցակցության իրավիճակի վերաբերյալ» հաշվետվության ընթացքը, ԱՊՀ մասնակից պետություններում գաղտնիությունից հրաժարվելու (waiver) մեխանիզմի կիրառման վերաբերյալ տիպային պարզաբանումները, հակամենաշնորհային օրենսդրության էքս-տարածքային կիրառման հարցում մասնակից պետությունների փորձը, ինչպես նաև սակագնային կարգավորման համակարգի կատարելագործմանն առնչվող հարցեր:

ՀՀ ՏՄՊՊՀ-ն ԱՊՀ ՀՔՄԽ շրջանակներում 2019 թվականի ընթացքում մասնակցել է մի շարք ոլորտներում (այդ թվում՝ բժշկական սարքավորումների, ավտոմոբիլային ուղևորափոխադրումների և այլն) համատեղ ուսումնասիրությունների իրականացմանը, ինչպես նաև աշխատանքներ է կատարել նախկինում իրականացված ուսումնասիրությունների արդյունքում ձևավորված մրցակցային միջավայրի բարելավման համար ներկայացված առաջարկների իրագործման ուղղությամբ:

ԵՄ

2019 թվականին իրականացվել են աշխատանքներ ՀՀ և ԵՄ և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով հանձնաժողովին վերապահված պարտավորությունների և հանձնառությունների իրականացման ուղղությամբ, մասնավորապես՝ մրցակցության, պետական օժանդակության, սպառողների շահերի պաշտպանության և պետական ձեռնարկություններին առնչվող հարցերով: Իրավասու մարմնին է ներկայացվել տեխնիկական աջակցության և տեղեկատվության փոխանակման «Թայեքս» գործիքի 2 հայտադիմում՝ անբարեխիղճ մրցակցության դրսևորումներում սպառողների շահերի պաշտպանության մասին ՀՀ օրենսդրության և անբարեխիղճ մրցակցության դրսևորումների որոշման համար հիմնարար սկզբունքների կատարելագործման ուղղություններով ԵՄ լավագույն փորձը ձեռք բերելու նպատակով: Հանձնաժողովի պաշտոնյան, ՀՀ պատվիրակության կազմում, մասնակցել է Բրյուսել քաղաքում կայացած ՀՀ և ԵՄ միջև Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի շրջանակներում ՀՀ-ԵՄ Առևտրի հարցերով գործընկերության կոմիտեի երկրորդ նիստին:

1. «Համաշխարհային բանկի խումբ – ԵՄ գործընկերության առաջարկ. 2017-2020 թվականներին Հայաստանին միասնական աջակցության շրջանակ. տնտեսական կառավարում» ծրագրի շրջանակներում հանձնաժողովն ակտիվ համագործակցել է Համաշխարհային բանկի և ԵՄ պատվիրակության հետ: Հանձնաժողովին տրամադրվելու է աջակցություն երկու բաղադրիչով՝

- *պետական օժանդակության վերահսկման նպատակով իրավական և տնտեսական աջակցություն,*
- *«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի՝ պետական մարմինների և դրանց պաշտոնատար անձանց կողմից հակամրցակցային գործողություններին վերաբերող դրույթների կիրարկման համար անհրաժեշտ մեխանիզմների մշակման և իրականացման համար աջակցություն:*

Համաշխարհային բանկի հետ համագործակցությունը շարունակվել է նաև «Զարգացման քաղաքականության գործառնություն» ծրագրի շրջանակներում հանձնաժողովին պետական օժանդակության միասնական գրանցամատյան վարելու լիազորություններ վերապահելու ուղղությամբ:

2. Հաստատվել է Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի հետ ԵՄ 2017 թվականի տարեկան գործողությունների ծրագրում ներառված՝ «Հայաստանի հետ տեխնիկական համագործակցության գործիք» ֆինանսավորման համաձայնագրի շրջանակում տեխնիկական աջակցության ծրագիրը՝ հետևյալ ուղղություններով.

- *հանձնաժողովի գործունեությանն օժանդակելու նպատակով համապատասխան ուղեցույցների մշակում,*
- *հանձնաժողովի աշխատակիցների մասնագիտական գիտելիքների կատարելագործման նպատակով վերապատրաստման դասընթացների կազմակերպում, մասնավորապես՝ գերիշխող դիրքի գնահատման, գերիշխող դիրքի չարաշահման գնահատման, ապրանքային շուկաների ուսումնասիրության մեթոդաբանության, հանկարծահաս այցերի (dawn raids) իրականացման ուղղություններով,*
- *հանձնաժողովի կողմից վարույթներ իրականացնելիս շուկայի ուսումնասիրությունների իրականացման գործում աջակցություն,*
- *հանձնաժողովի վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ու քարոզչության ուղղված մեխանիզմների մշակման գործում աջակցություն,*
- *հանձնաժողովի աշխատակիցների՝ արտերկրի մրցակցային մարմիններ այցերի կազմակերպման, կարճաժամկետ վերապատրաստման դասընթացներին և մրցակցության վերաբերյալ միջազգային միջոցառումներին մասնակցելու գործում աջակցություն:*

ՄԱԿ ՄԱԱԶՀ/UNCTAD

Հաշվետու ժամանակահատվածում հանձնաժողովը մասնակցություն է ունեցել ՄԱԿ-ի առևտրի և զարգացման հարցերով համաժողովի մրցակցության օրենքի և քաղաքականության վերաբերյալ փորձագետների միջկառավարական խմբի 18-րդ նիստին, որտեղ քննարկվել են անդրսահմանային շուկաներում հակամրցակցային համաձայնությունների և միաձուլումների դեմ պայքարում մրցակցության մարմինների միջև փոխգործակցության, մրցակցության օրենքի և քաղաքականության վերաբերյալ կամավոր փորձագիտական ակնարկների, մրցակցության ոլորտում տեխնիկական օժանդակությանը և կարողությունների զարգացմանն առնչվող հարցեր, ինչպես նաև թվային տնտեսությունում և առողջապահական ոլորտում առկա մրցակցության խնդիրները:

ՏՀԶԿ/OECD

2019 թվականին հանձնաժողովը մասնակցություն է ունեցել Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության մրցակցության հարցերով 18-րդ համաշխարհային համաժողովին: Համաժողովը ՏՀԶԿ անդամ և ոչ անդամ պետությունների միջև քաղաքական երկխոսության հարթակ է հանդիսանում: Համաժողովի ընթացքում քննարկվել են առևտրային պայմանագրերում մրցակցության օրենսդրության դրույթներին, դինամիկ շուկաներում միաձուլումների վերահսկմանը, թվային տնտեսության մեջ մրցակցության հիմնախնդիրներին առնչվող հարցեր: Տարվա ընթացքում հանձնաժողովի մի շարք աշխատակիցներ ՌԴ-ում, Ուկրաինայում, Հունգարիայում մասնակցել են ՏՀԶԿ մրցակցության հարցերով Բուդապեշտի տարածաշրջանային կենտրոնի կազմակերպած սեմինարներին և աշխատաժողովներին՝ «Միաձուլումների վերահսկման ուսումնասիրություններ և նորարարություն», «Մրցակցության քաղաքականության կիրարկումն ու քարոզչությունը դեղագործական ոլորտում», «Մրցակցության կանոններն էներգետիկ ոլորտում», «Մրցակցության վերաբերյալ գործերում փոխհատուցումներն ու պարտավորությունները» և «Վաճառքի ուղղահայաց սահմանափակումներ և էլեկտրոնային առևտուր» թեմաներով:

Բազմակողմ համագործակության շրջանակներում հանձնաժողովը շարունակել է համագործակցությունը «Միջազգային մրցակցության ցանց» և «Էներգետիկ համայնքի մրցակցության ցանց» կազմակերպությունների հետ՝ համաժողովների, սեմինարների, տեսահամաժողովների, վեբինարների մասնակցության, ինչպես նաև աշխատանքային կարգով ուսումնասիրությունների և օրենսդրական բարեփոխումների վերաբերյալ կարծիքների և դիրքորոշումների փոխանակման միջոցով:

Այս համագործակցությունների արդյունքում նախագծվում և հաստատվում են մրցակցության քաղաքականության կիրարկման և օրենսդրությունների համապատասխանեցման համատեղ գործողությունների շրջանակները, համատեղ ուսումնասիրությունների իրականացման մեխանիզմները:

Երկկողմ համագործակցություն

Ռուսաստանի Դաշնություն

Հանձնաժողովը 2019 թվականին ակտիվ համագործակցել է ՌԴ դաշնային հակամենաշնորհային ծառայության հետ համատեղ ուսումնասիրությունների իրականացման, փորձի փոխանակման, ապրանքային շուկաների ուսումնասիրությունների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման, ինչպես նաև հանձնաժողովի կողմից վարույթների իրականացման շրջանակներում համապատասխան հարցումներ իրականացնելու, ՌԴ տարածքում գործող ՀՀ ռեզիդենտ հանդիսացող տնտեսվարող սուբյեկտների շահերի պաշտպանության նպատակով իրավական աջակցության տրամադրման ուղղություններով: Հանձնաժողովի աշխատակիցը ՌԴ Կազան քաղաքում մասնակցել է ՌԴ դաշնային հակամենաշնորհային ծառայության ուսումնամեթոդական կենտրոնի կազմակերպած «Մրցակցությանն առնչվող հարցերը դեղագործական շուկաներում» թեմայով վերապատրաստման դասընթացին:

Աշխատանքներ են իրականացվել ՀՀ ՏՄՊՊՀ և ՌԴ դաշնային հակամենաշնորհային ծառայության միջև մրցակցության ոլորտում համագործակցության մասին փոխըմբռնման հուշագիր կնքելու ուղղությամբ, որը հնարավորություն կընձեռի ավելի սերտացնելու երկու երկրնե-

րի մրցակցային մարմինների միջև փոխգործակցությունը՝ համատեղ վարույթների իրականացման, ուսումնասիրությունների համար անհրաժեշտ տեղեկատվության և փորձի փոխանակման, ինչպես նաև ՌԴ դաշնային հակամենաշնորհային ծառայության ուսուցման կենտրոնում հանձնաժողովի աշխատակիցների վերապատրաստման ուղղություններով:

Կորեայի Հանրապետություն

Կորեայի Հանրապետության արդար առևտրի հանձնաժողովի հետ համագործակցության շրջանակներում շարունակվել են աշխատանքները հանձնաժողովի աշխատակիցների կարողությունների զարգացման և փորձի փոխանակման նպատակով վերապատրաստման դասընթացների, փոխադարձ այցերի կազմակերպման, ինչպես նաև փորձագիտական խորհրդատվության փոխանակման ուղղություններով:

Կորեայի Հանրապետության տրամադրած գիտելիքների փոխանակման ծրագրի շրջանակում հանձնաժողովի աշխատակիցները Կորեայի Սեյջոնգ քաղաքում մասնակցել են վերապատրաստման դասընթացների:

Շարունակվում են ակտիվ աշխատանքներ իրականացվել Կորեայի Հանրապետության արդար առևտրի հանձնաժողովի հետ համագործակցության շրջանակն ընդլայնելու, վերապատրաստման համար առավել լայն հնարավորություններ ստեղծելու, ինչպես նաև կորեացի առաջադեմ փորձագետների հյուրընկալելու և վերջիններիս առաջավոր փորձը, մասնավորապես՝ պետական գնումների

50
տեսահամաժողով

7
նիստ, խորհրդակցություն

7
վերապատրաստման դասընթաց

6
սեմինար, աշխատաժողով

4
միջազգային համաժողով

Բովանդակություն

գործընթացում հակամրցակցային համաձայնությունների բացահայտմանն ուղղված «Հայտերի ներկայացման ցուցանիշների վերլուծության համակարգը» (BRIAS) Հայաստանում ներդնելու հնարավորությունները քննարկելու ուղղություններով:

2019 թվականի ընթացքում հանձնաժողովը հյուրընկալել է ԱՄՀ, ՎԶԵԲ, ԵՄ, ՀԲ պատվիրակությունների, ինչպես նաև տարբեր երկրներից ժամանած փորձագետների, որոնց հետ քննարկվել են մրցակցային իրավիճակի բարելավմանն ուղղված քայլերն ու հեռանկարները:

Հանձնաժողովը շարունակել է փոխգործակցությունը նաև Վրաստանի, Ֆրանսիայի, Ռումինիայի, Գերմանիայի մրցակցային մարմինների հետ անհրաժեշտ փորձի և տեղեկատվության փոխանակման, մասնագետների վերապատրաստման, փոխադարձ այցերի կազմակերպման ուղղություններով:

Աշխատանքներ են մեկնարկել մի շարք երկրների, այդ թվում՝ Նիդերլանդների, Իտալիայի, Ճապոնիայի, Ավստրիայի մրցակցային մարմինների հետ համագործակցության նոր ուղիներ հաստատելու ուղղությամբ:

8. ՀՀ ՏՄՊՊՀ 2020 թվականի առաջնահերթությունները

- *ՀՀ-ում արդյունավետ մրցակցային միջավայրի ձևավորման և տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության դրույթների պահպանման նկատմամբ հսկողություն սահմանելու նպատակով 2020 թվականին հանձնաժողովը նախատեսում է ուսումնասիրություններ իրականացնել՝*

1. *հեռուստատեսության և թվային հարթակների միջոցով գովազդի տարածման,*
2. *հանքարդյունաբերության,*
3. *ցորենի և ալյուրի,*
4. *ձվի,*
5. *դեղերի շրջանառության ոլորտներում:*

2020 թվականին նախատեսվում է ուսումնասիրություն իրականացրել նաև կաթնամթերքի շրջանառության ոլորտում հնարավոր անբարեխիղճ մրցակցության գործողությունները բացահայտելու և հասարակության մոլորեցումը բացառելու նպատակով: Ուսումնասիրությունը միտված է լինելու բացահայտել կաթնամթերքի արտադրման փուլում բուսական յուղերի (կոկոսի, պալմայի և այլն) օգտագործումն այն ապրանքներում, որոնց վրա մակնշված է «թթվասեր», «կարագ» կամ «կաթնային յուղով պատրաստված այլ կաթնամթերք»:

- *Կարևորելով մրցակցության խրախուսումը դեղերի շուկայում և հաշվի առնելով առողջապահության ոլորտի կարևոր սոցիալական նշանակությունը՝ հանձնաժողովը, ՀՀ առողջապահության նախարարության հետ համագործակցությամբ, նախատեսում է իրականացնել դեղերի գների պետական կարգավորում ՌԴ դաշնային հակամենաշնորհային ծառայության փորձի հիման վրա: Մասնավորապես, նախատեսվում է հիմնական դեղերի ցանկում ընդգրկված որոշ դեղերի մասով գրանցել բացթողնման սահմանային գներ, ինչպես նաև՝ մանրածախ և մեծածախ հավելագների սահմանաչափեր հասարակության շրջանում այդ դեղերի հասանելիությունը բարձացնելու նպատակով: Իրականացվելիք գործողությունները կհանգեցնեն նաև պետական միջոցների արդյունավետ օգտագործմանը:*
- *Պետական գնումների գործընթացում հնարավոր հակամրցակցային համաձայնություններն ու գերիշխող դիրքի չարաշահումներն ավտոմատացված կարգով բացահայտելու նպատակով նախատեսվում է ներդնել «Հայտերի ներկայացման ցուցանիշների վերլուծության համակարգ»՝ հիմնվելով Կորեայի արդար առևտրի հանձնաժողովի փորձի վրա:*
- *Պետական օժանդակության նկատմամբ վերահսկողության ինստիտուտի կատարելագործման նպատակով 2020 թվականին համապատասխան օրենսդրական փոփոխություններով հստակեցվելու է «պետական օժանդակություն» հասկացությունը, ամրագրվելու է պետական օժանդակություն տրամադրող մարմինների կողմից տրամադրված պետական օժանդակությունների վերաբերյալ տեղեկատվությունը հանձնաժողովին տրամադրելու պահանջը և հանձնաժողովին վերապահվելու է պետական մարմինների կողմից տրամադրվող պետական օժանդակությունների վերաբերյալ միասնական գրանցամատյանի վարման գործառույթ: Տեղեկատվական բազայի ուսումնասիրությունն ու վերլուծությունը հնարավորություն կտան հանձնաժողովին բացահայտելու պետական օժանդակություն տրամադրելու արդյունքում տնտեսական մրցակցության հնարավոր սահմանափակման, կանխման կամ արգելման դեպքերը, Օրենքի հնարավոր խախտումները:*
- *Հանձնաժողովի աշխատանքային գործընթացների արդյունավետությունը բարձրացնելու, օպերատիվությունն ու թափանցիկությունն ապահովելու, ինչպես նաև դրանք առավել հանրային և դյուրամատչելի դարձնելու նպատակով Համաշխարհային բանկի «Հայաստան. պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագրի» ֆինանսավորման շրջանակում 2020 թվականին հանձնաժողովի համար մշակվելու է էլեկտրոնային համակարգ՝ բաղկացած արտաքին կայքից և ներքին տեղեկատվական հարթակից, որոնց փոխհնտեգրվածության միջոցով հնարավոր է լինելու արտաքին աղբյուրներից տեղեկատվության հավաքագրումն ու փոխանցումը ներքին համակարգին և ներքին ընթացակարգերից բխող տեղեկատվության ինքնաշխատ հրապարակումը ՀՀ ՏՄՊՊՀ կայքում:*

Համակարգը, որի միջոցով թվայնացվելու են հանձնաժողովի բիզնես գործընթացները, հնարավորություն է տալու վարելու փվյալների շրեմարան, այլ պետական մարմինների փվյալների բազաներից տեղեկատվություն ներբեռնելու և վերլուծելու ավտոմատ կարգով, մուրքագրելու որոշ ապրանքատեսակների գների վերաբերյալ տեղեկատվությունը, հաշվելու դրանց դինամիկան և կատարելու այլ գործողություններ: Արդյունքում կկրճատվի վարչարարությունը, ժամանակն ու ռեսուրսները կօգտագործվեն ավելի ռացիոնալ, կբարձրանա հանրության իրազեկվածության աստիճանն ու վստահությունը հանձնաժողովի նկատմամբ:

Բովանդակություն

9. 2019 թվականի տարեկան ֆինանսատնտեսական գործունեություն

		Տնտեսագիտական հոդված	Ճշտված պլան	Փաստացի դրամարկղային ծախս	Բյուջեի կատարման %
	1034-11001 «Տնտեսական մրցակցության պաշտպանություն» ծրագրի «ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառում քաղաքականության մշակում և վերահսկողություն» միջոցառում		393 516,2	380 984,5	96,8
1	Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	4111	271 974,1	271 974,1	100,0
2	Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	4112	62 505,7	62 500,6	100,0
3	Քաղաքացիական, դատական և պետական ծառայողների պարգևատրում	4113	15 201,2	15 201,2	100,0
4	Էներգետիկ ծառայություններ	4212	3 860,5	2 967,3	76,9
5	Կոմունալ ծառայություններ	4213	129,0	108,6	84,2
6	Կապի ծառայություններ	4214	6 115,3	4 015,2	65,7
7	Ապահովագրական ծախսեր	4215	204,0	197,9	97,0
8	Ներքին գործուղումներ	4221	200,0	85,6	42,8
9	Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր	4222	7 700,0	7 560,1	98,2
10	Համակարգչային ծառայություններ	4232	1 920,0	1 920,0	100,0
11	Տեղեկատվական ծառայություններ	4234	1 577,8	1 408,1	89,2
12	Ներկայացուցչական ծախսեր	4237	1 500,0	1 399,9	93,3
13	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	3 631,8	786,7	21,7
14	Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	4251	4 500,0	0,0	0,0
15	Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	4252	3 826,0	2 610,0	68,2
16	Գրասենյակային նյութեր և հագուստ	4261	988,0	957,0	96,9
17	Տրանսպորտային նյութեր	4264	5 250,0	4 929,7	93,9
18	Կենցաղային և հանրային սննդի նյութեր	4267	258,4	258,4	100,0
19	Հատուկ նպատակային այլ նյութեր	4269	2 000,0	2 000,0	100,0
20	Պարտադիր վճարներ	4823	174,4	104,0	59,6
	1034-31001 «Տնտեսական մրցակցության պաշտպանություն» ծրագրի «ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի տեխնիկական հագեցվածության բարելավում» միջոցառում		*12 650,0*	*12 197,9*	96,4
1	Վարչական սարքավորումներ	5122	12 650,0	12 197,9	96,4

Բովանդակություն

Հավելված. 2019 թվականի վարչական վարույթները

h/h	Համառոտ նկարագրություն	Ոլորտ, շուկա, ապրանք, ծառայություն	Ընթացք/ավարտ
Համակարգակցային համաձայնություն			
1	«Գրանդ Դիլինգ» ՍՊԸ բողոքը «Բասենի Գովք» ՍՊԸ և «Ջեյ Թի Այ Արմենիա» ՓԲԸ միջև համակարգակցային համաձայնության տարրերի առկայության վերաբերյալ	ծխախոտի շրջանառություն	կարճվել է
Գերիշխող դիրքի չարաշահում			
2	«Սելս Սիթի» ՍՊԸ բողոքը «Կոկա-Կոլա Հելլենիկ Բոթլինգ Քամփնի Արմենիա» ՓԲԸ-ի կողմից խտրական պայմանների կիրառման վերաբերյալ	գազավորված ըմպելիքներ	կարճվել է
3	«Ա-2» ՍՊԸ բողոքը միաֆազ բազմասակագնային էլեկտրոնային հաշվիչների ձեռքբերման նպատակով ՀԷՑ-ի հայտարարած գնման ընթացակարգերի վերաբերյալ	գնման ընթացակարգ	կարճվել է
4	«Վագա Ֆարմ» ՍՊԸ բողոքը «Նատալի Ֆարմ» ՍՊԸ և «Ալֆա Ֆարմ» ՓԲԸ դեմ իրեն զեղչեր չտրամադրելու վերաբերյալ	դեղերի շրջանառություն	կարճվել է
5	«Բասենի Գովք» ՍՊԸ բողոքն ընդդեմ «Գրանդ Դիլինգ» ՍՊԸ առ այն, որ վերջինս դադարեցրել է ծխախոտ մատակարարել իրեն	ծխախոտի շրջանառություն	կարճվել է
6	«Վեոլիա Ջուր» ՓԲԸ վարչական բողոքը ՀՀ ՏՄՊՊՀ որոշման դեմ, որով «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի նկատմամբ նշանակվել է տուգանք գերիշխող դիրքի չարաշահման համար	ջրամատակարարում	մերժվել է
7	«Ֆարմբրոկեր» ՍՊԸ բողոքն առ այն, որ «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ն մանրածախ իրացման շուկայում դեղերը վաճառում է ավելի ցածր գնով, քան մեծածախ իրացման դեպքում	դեղերի շրջանառություն	կարճվել է
8	«Հերբիցիդներ» ապրանքային շուկայում «ՆԱՏԱԼԻ ՖԱՐՄ» ՍՊԸ-ի կողմից գերիշխող դիրքի չարաշահման վերաբերյալ	թունաքիմիկատներ	տրվել է նախազգուշացում
9	«Տելեմաք-գազ» ՍՊԸ բողոքը «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից գերիշխող դիրքի չարաշահման վերաբերյալ	գազահաշվիչների տեղադրում, սպասարկում	կարճվել է
10	Քաղաքացու բողոքը «Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից առանց որևէ լրացուցիչ ծառայության մատուցման «Հասցեատիրոջ հանձնարարագիր» ծառայության համար վճար գանձելու և գերիշխող դիրքի չարաշահման վերաբերյալ	փոստային ծառայություններ	կարճվել է
11	«ՄԴԿ» ՍՊԸ բողոքը «Մոբայլ Սենթր Արթ» ՍՊԸ-ի կողմից «Xiaomi» ապրանքանիշի որոշ բջջային հեռախոսներ ինքնարժեքից ցածր գներով վաճառելու վերաբերյալ	բջջային հեռախոսների իրացում	վերսկսվել է և կարճվել
12	«ԱՆԴ» ՍՊԸ բողոքը «ԷԿՈԳԼՈԲ» ՍՊԸ-ի կողմից գերիշխող դիրքի չարաշահման վերաբերյալ	սերտիֆիկացման ոլորտ	կարճվել է
13	«Տելեմաք Գազ» ՍՊԸ բողոքը «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից գերիշխող դիրքի չարաշահման վերաբերյալ	գազի սպասարկում	վերսկսվել է 14.06.2019թ վարչական բողոքի հիման վրա հարուցված վարչական վարույթը, մերժվել է 14.06.2019թ. ներկայացված վարչական բողոքը
14	«Դիջիթալ Կարամել» ՍՊԸ բողոքը «Մեդիա Սիսթեմ» ՍՊԸ-ի կողմից հեռուստատեսային և ինտերնետ գովազդի ծառայությունների ոլորտում մրցակցության օրենսդրության խախտումների վերաբերյալ	գովազդային ծառայություններ	կարճվել է
15	ԱՁ Վ. Սարգսյանի բողոքն առ այն, որ «Գրանդ Դիլինգ» ՍՊԸ-ն հրաժարվում է ապրանք մատակարարել իրեն	առևտուր	կարճվել է
16	Քաղաքացու դիմում- բողոքը «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից գերիշխող դիրքի չարաշահման վերաբերյալ	գազի սպասարկում	կարճվել է
17	«ԱՆԴ» ՍՊԸ վարչական բողոքը ՀՀ ՏՄՊՊՀ 19.09.2019թ. թիվ 117-Ա որոշման դեմ	սերտիֆիկացում	կասեցվել է
18	Քաղաքացու բողոքը «Հայփոստ» ՓԲԸ կողմից գերիշխող դիրքի չարաշահման վերաբերյալ	ծառայությունների մատուցում	կարճվել է

Բովանդակություն

h/h	Համառոտ նկարագրություն	Ոլորտ, շուկա, ապրանք, ծառայություն	Ընթացք/ավարտ
Համակենտրոնացման հայտարարագրում			
19	Համակենտրոնացման թույլտվություն ստանալու վերաբերյալ	փայտաթեփային սալիկների արտադրություն	համակենտրոնացումը թույլատրվել է
20	Համակենտրոնացման թույլտվություն ստանալու վերաբերյալ	ֆինանսական ծառայություններ	համակենտրոնացումը թույլատրվել է
21	Համակենտրոնացման թույլտվություն ստանալու վերաբերյալ	շինարարություն, առևտրի իրականացման վայրի կազմակերպում	համակենտրոնացումը թույլատրվել է
22	Համակենտրոնացման թույլտվություն ստանալու վերաբերյալ	ներդրումային գործունեություն	համակենտրոնացումը թույլատրվել է
23	Համակենտրոնացման թույլտվություն ստանալու վերաբերյալ	հյուրանոցային ծառայությունների մատուցում	համակենտրոնացումը թույլատրվել է
24	Համակենտրոնացման թույլտվություն ստանալու վերաբերյալ	հագուստի, կոշիկի և աքսեսուարների մանրածախ վաճառք	համակենտրոնացումը թույլատրվել է
25	Համակենտրոնացման թույլտվություն ստանալու վերաբերյալ	ծառայությունների մատուցում (տարածքների վարձակալություն)	համակենտրոնացումը թույլատրվել է
26	Համակենտրոնացման թույլտվություն ստանալու վերաբերյալ	ներդրումային ծառայությունների մատուցում, արժեթղթերի ռեեստրավարում, պահառություն	համակենտրոնացումը թույլատրվել է
27	Համակենտրոնացման թույլտվություն ստանալու վերաբերյալ	խոշոր եղջերավոր անասունների բուծում, հանրային սննդի ապահովման ծառայություններ	համակենտրոնացումը թույլատրվել է
28	Համակենտրոնացման թույլտվություն ստանալու վերաբերյալ	առևտրի կենտրոն, անշարժ գույքի վարձակալություն, կառավարում	համակենտրոնացումը թույլատրվել է
29	Համակենտրոնացման թույլտվություն ստանալու վերաբերյալ	անշարժ գույքի վարձակալություն, ավտոկայանման ծառայության մատուցում, գովազդի հեռարձակման ծառայություն	համակենտրոնացումը թույլատրվել է
30	Համակենտրոնացման թույլտվություն ստանալու վերաբերյալ	հյուրանոցային ծառայությունների մատուցում	համակենտրոնացումը թույլատրվել է
31	Համակենտրոնացման թույլտվություն ստանալու վերաբերյալ	ներդրումային գործունեություն	կարճվել է
32	Համակենտրոնացման թույլտվություն ստանալու վերաբերյալ	շինանյութի ներմուծում, իրացում	համակենտրոնացումը թույլատրվել է
33	Համակենտրոնացման թույլտվություն ստանալու վերաբերյալ	առևտուր	համակենտրոնացումը թույլատրվել է
34	Համակենտրոնացման թույլտվություն ստանալու վերաբերյալ	հանքային ջուր	համակենտրոնացումը թույլատրվել է
35	Համակենտրոնացման թույլտվություն ստանալու վերաբերյալ	էլեկտրաէներգիա	համակենտրոնացումը թույլատրվել է
36	Համակենտրոնացման թույլտվություն ստանալու վերաբերյալ	վիզաների դիմումների փաստաթղթավորում և ուղեկցում հյուպատոսական հիմնարկներում	կարճվել է
37	Համակենտրոնացման թույլտվություն ստանալու վերաբերյալ	միս, մսամթերքի արտադրություն	համակենտրոնացումը թույլատրվել է
38	Համակենտրոնացման թույլտվություն ստանալու վերաբերյալ	համակցված կերի արտադրություն	համակենտրոնացումը թույլատրվել է
39	Համակենտրոնացման թույլտվություն ստանալու վերաբերյալ	հանքարդյունաբերություն, ճանապարհաշինություն	համակենտրոնացումը թույլատրվել է
40	Համակենտրոնացման թույլտվություն ստանալու վերաբերյալ	գրասենյակային տարածքների հանձնում վարձակալությամբ, ծխախոտային արտադրանքի վաճառք	համակենտրոնացումը թույլատրվել է
41	Համակենտրոնացման թույլտվություն ստանալու վերաբերյալ	թերմոստատների արտադրություն	համակենտրոնացումը թույլատրվել է
42	Համակենտրոնացման թույլտվություն ստանալու վերաբերյալ	էլեկտրաէներգիա	համակենտրոնացումը թույլատրվել է
43	Համակենտրոնացման թույլտվություն ստանալու վերաբերյալ	քաղաքաշինական, շինարարական գործունեություն	համակենտրոնացումը թույլատրվել է
44	Համակենտրոնացման թույլտվություն ստանալու վերաբերյալ	հանքարդյունաբերություն	համակենտրոնացումը թույլատրվել է
45	Համակենտրոնացման թույլտվություն ստանալու վերաբերյալ	ներդրումային գործունեություն	համակենտրոնացումը թույլատրվել է
46	Համակենտրոնացման թույլտվություն ստանալու վերաբերյալ	մսամթերք	համակենտրոնացումը թույլատրվել է
47	Համակենտրոնացման թույլտվություն ստանալու վերաբերյալ	անվանական բաժնետոմսեր	համակենտրոնացումը թույլատրվել է

h/h	Համառոտ նկարագրություն	Ոլորտ, շուկա, ապրանք, ծառայություն	Ընթացք/ավարտ
Չհայտարարագրված համակենտրոնացում			
48	Ֆիզիկական անձ Ա.Ադամյանի և «Սիսիանի բեռնաուղևորատար ավտոտրանսպորտային» ՍՊԸ միջև կնքված գործարքը որպես չհայտարարագրված համակենտրոնացում որակելու վերաբերյալ	ուղևորային և բեռնային ավիափոխադրումներ	տրվել է նախազգուշացում
49	«Ավիակոմպանիա Արմենիա» ՍՊԸ և ֆիզիկական անձ Թ. Գաիաշվիլիի միջև կնքված գործարքը որպես չհայտարարագրված համակենտրոնացում որակելու վերաբերյալ	ճանապարհների հիմնանորոգում և սպասարկում	տրվել է նախազգուշացում
50	«Նիկօ Ինթերնեյշնլ» ՍՊԸ և ֆիզիկական անձ Հ. Բերբերյանի միջև կնքված գործարքը որպես չհայտարարագրված համակենտրոնացում որակելու վերաբերյալ	կաճույքի արտադրություն և մանրամեծածախ առևտուր	տրվել է նախազգուշացում
51	«Մանկական զվարճանքների կենտրոն» ՍՊԸ և ֆիզիկական անձ Գ. Ավետիսյանի միջև կնքված գործարքը որպես չհայտարարագրված համակենտրոնացում որակելու վերաբերյալ	հյուրանոցային ծառայությունների մատուցում	տրվել է նախազգուշացում
52	«Տրինիդադ Սանռայզ Ինվեսթմենթս Բ. Վ.» ընկերության և «Կլեոպատրա» ՍՊԸ միջև կնքված գործարքը որպես չհայտարարագրված համակենտրոնացում որակելու վերաբերյալ	խաղատնային գործունեություն	տրվել է նախազգուշացում
53	«Թիէյ Սլուշն» ՓԲԸ և «Հոյս-96» ՍՊԸ միջև կնքված գործարքը որպես չհայտարարագրված համակենտրոնացում որակելու վերաբերյալ	անշարժ գույքի վարձակալությամբ տրամադրում	տրվել է նախազգուշացում
54	«Էյչ Այ Ուայ» ՍՊԸ և ֆիզիկական անձ Ս. Գզրարյանի միջև կնքված գործարքը որպես չհայտարարագրված համակենտրոնացում որակելու վերաբերյալ	հյուրանոցային ծառայությունների մատուցում	տրվել է նախազգուշացում
Անբարեխիղճ մրցակցության գործողություն			
55	«Ֆիանթիս ՍԵ» ընկերության բողոքն ընդդեմ «Մեդ-Պրոգրես» և «Մեդպրոգրես» ՍՊԸ-ների առ այն, որ վերջիններս օգտագործել են իր գրանցած «Պենոքսալ» ապրանքային նշանին շփոթության աստիճանի նման «ՊԵՆՕՔՍԱԼ PENOXAL» և «Պենոքսալ ԲԳ» ապրանքային նշանները	սննդային հավելման ներմուծում և իրացում	տրվել է նախազգուշացում
56	«Ջերմուկ Գրուպ» ՓԲԸ դիմում-բողոքը «Սուպեր Գրուպ» ընկերության կողմից «Ջերմուկ» ապրանքային նշանի ապօրինի օգտագործման վերաբերյալ	հանքային ջուր	տրվել է նախազգուշացում
57	Պաշտպանության նախարարության բողոքը «Զինտաքսի» ՍՊԸ դեմ առ այն, որ վերջինս, առանց իրենց համաձայնության, օգտագործում է ՀՀ զինված ուժերի զինանշանը, իսկ ԶԼՄ-ներով և համացանցով տարածվող հոլովակներում նշվում է, որ հասույթի 80%-ը հատկացվում է զինվորի համար բարեգործական ծրագրերի իրականացմանը, որը չի համապատասխանում իրականությանը	ուղևորափոխադրումներ	տրվել է նախազգուշացում
58	«Ջազզվե» ՍՊԸ բողոքը «Սլավ Գրուպ» ՓԲԸ-ի կողմից Հայաստան ներմուծված «ДЖОКЕЙ» ապրանքանիշի «ДЛЯ ТУРКИ» ապրանքատեսակի դարձերեսի մակնշումը «Ջազզվե» ՍՊԸ գրանցած «JAZZVE» ապրանքային նշանին շփոթության աստիճանի նման լինելու վերաբերյալ:	սուրճ	կարճվել է
59	«VEnews blog» նորությունների բլոգի բողոքը «Վեգա» խանութ սրահի դեմ առ այն, որ վերջինս իրականացնում է հասարակությանը մոլորեցնող գովազդ հետևյալ բովանդակությամբ. «Ձեղչեր մինչև 100%, 10000 արժեքավոր նվերներ և գալիք 2019-ին ընդառաջ 20 այֆոն (iphone) և 19 մերսեդես (Mercedes-Benz) ավտոմեքենա»	առևտուր	տրվել է նախազգուշացում
60	Առևտրային ցանցեր կառավարող և վերջիններիս ապրանքներ մատակարարող թվով 143 տնտեսվարող սուբյեկտներին զգուշացում տալու վերաբերյալ, որպեզի վերջիններս զերծ մնան անբարեխիղճ մրցակցության դրսևորումներից	առևտուր	տրվել է զգուշացում
61	Քաղաքացու բողոքը «Մոբայլ Սենթր Արտ» ՍՊԸ գովազդում ոչ հավաստի տեղեկատվության վերաբերյալ	բջջային հեռախոսների վաճառք	կարճվել է
62	«Էվրի Դեյ» ՓԲԸ բողոքն առ այն, որ «Ուոթերլոկ» ՍՊԸ «Ապարան» ապրանքային նշանով ջրի պիտակը պարունակում է սպառողին մոլորեցնող տեղեկատվություն	շշալցված խմելու ջուր	կարճվել է

h/h	Համառոտ նկարագրություն	Ոլորտ, շուկա, ապրանք, ծառայություն	Ընթացք/ավարտ
63	«Պռոշյանի կոնյակի գործարան» ՍՊԸ բողոքն իր գրանցած՝ ձիու կերպարով կոնյակի շշի ծավալային ապրանքային նշանին շփոթության աստիճան նման «Bucking horse Armenian soul» նշանը «Երևան Ալկո» ՍՊԸ-ի կողմից օգտագործվելու վերաբերյալ	ալկոհոլային խմիչք (կոնյակ)	կարճվել է
64	«Նաֆֆի» ՍՊԸ բողոքը «ՍԱՍ-Գրուպ» ՍՊԸ-ի կողմից արտադրվող և վերջինիս ու «Իլենիա» ՍՊԸ-ի կողմից իրացվող «Կետչուպ» անվանումով ապրանքի փաթեթավորման վրա «ՍԱՍ-Գրուպ» ՍՊԸ անվան, հասցեի վերաբերյալ նշումների բացակայության, ինչպես նաև «Կետչուպ» անվանումով ապրանքի փաթեթավորման վրա «Նաֆֆի» ՍՊԸ-ին պատկանող գծիկավոր կոդի (շտրիխ կոդի) օգտագործման վերաբերյալ	կետչուպ	տրվել է նախազգուշացում
65	«Գրին վեյ թրեվլ» ՍՊԸ դիմում-բողոքն իրեն պատկանող «GREENWAY TRAVEL AGENCY» ապրանքային նշանին շփոթության աստիճան նման «GW GREEN WAY LOGISTICS» ապրանքային նշանը «Գրին վեյ լոջիսթիքս» ընկերության կողմից օգտագործելու վերաբերյալ	բեռնափոխադրման և ուղևորափոխադրման ծառայություններ	տրվել է նախազգուշացում
66	«Սլավ Գրուպ» ՓԲԸ բողոքն առ այն, որ «Վի Ջի Սուպերմարկետ» ՍՊԸ-ի կողմից շահագործվող առևտրի կետում վաճառվող, ԱՋ Գրիգորյանի և «Մասե» ՍՊԸ կողմից մատակարարված «Kinder chocolate» ապրանքային նշանով ապրանքի տուփերի դարձերեսին փակցված մակնշվածքում որպես ներմուծող նշված է «Սլավ Գրուպ» ՓԲԸ ֆիրմային անվանումը և հասցեն	կոնֆետներ	կարճվել է
67	Քաղաքացու բողոքն առ այն, որ կրել է ֆինանսական կորուստներ «Գլոբբինգ» ՍՊԸ մեղքով ապրանքի ուշացման հետևանքով	բեռնափոխադրման ծառայություն (Գլոբբինգ)	կարճվել է
68	«Գրանդ Քենդի» ՍՊԸ բողոքն «Ադամիում» ՍՊԸ-ի կողմից ներմուծվող ղազախական «РАХАТ» ընկերության արտադրության «МИШУТКА», «СКАЗКА», «КОРОВКА», «МУ МУ», «ВЕЧЕР», «СНЕЖОК» ապրանքային նշաններով մակնշված կոնֆետները «Գրանդ Քենդի» ՍՊԸ կողմից գրանցված նույնանուն ապրանքային նշաններով մակնշվող արտադրանքների հետ շփոթություն առաջացնելու վերաբերյալ	կոնֆետներ	տրվել է նախազգուշացում
69	«Միլառո» ՍՊԸ-ի կողմից իրացվող ապրանքի փաթեթավորման հայերեն մակնշման մեջ նշվել է, որ ապրանքը հանդիսանում է բուսական-սերուցքային սպրեդ, իսկ ռուսերեն մակնշման մեջ նշված է եղել «Масло» բառը	բուսական-սերուցքային սպրեդ	տրվել է զգուշացում
70	«Ավանի աղի կոմբինատ» ՓԲԸ դիմումն առ այն, որ «Սոլտեքս» ՍՊԸ կողմից փաթեթավորված «Եռակի մաքրազտված կերակրի աղ» անվանմամբ աղն իրականում Իրանից ներմուծված կերակրի աղ է, որը վերափաթեթավորումից հետո ստացել է «Եռակի մաքրազտված կերակրի աղ» անվանումը, ինչը չի համապատասխանում իրականությանը և մոլորության մեջ է գցում սպառողին	կերակրի աղ	տրվել է նախազգուշացում
71	«Ջերմուկ Գրուպ» ՓԲԸ դիմում-բողոքը «Սուպեր Գրուպ» ընկերության կողմից «Ջերմուկ» ապրանքային նշանի ապօրինի օգտագործման վերաբերյալ	հանքային ջուր	նշանակվել է տուգանք 143 094 դրամ
72	«Ռոբերտո Պլյուս» ՍՊԸ դիմումն իր գրանցած «Sunny Girl» ապրանքային նշանին շփոթության աստիճանի նման «Sanny Girl» ապրանքային նշանով ապրանքների վաճառքի վերաբերյալ	միջադիր	նշանակվել է տուգանք 1 279 098 դրամ
73	«Արբրեն» ՍՊԸ դիմումն իր՝ «Stumbras» ապրանքային նշանով արտադրանքն (օղի) «Ալկո Իմպորտ Էքսպորտ» ՍՊԸ-ի կողմից կրկնօրինակելու վերաբերյալ	օղի	նշանակվել է տուգանք 16 207 000 դրամ
74	«Ferrero S.p.A.» և «Soremartec S.A.» ընկերությունների շահերը մտավոր սեփականության օբյեկտների պաշտպանության ոլորտում ներկայացնող «Նահապետ և Կ» ՍՊԸ բողոքն առ այն, որ «Ավաս» ընկերությունն օգտագործում է իր գրանցած ապրանքային նշանին շփոթության աստիճան նման ապրանքային նշան	կոնֆետներ	կարճվել է
75	«Գ.Գ.Գ. Մանուկյան» ՍՊԸ դիմումն իր գրանցած «Afrodita» և «Argo Neo» ապրանքային նշանները «Բրենդ Դիստրիբյուտոր» ՍՊԸ-ի կողմից օգտագործվելու վերաբերյալ	առևտուր	կարճվել է
76	Քաղաքացու դիմում-բողոքը «Տելեմարկետ» ՍՊԸ-ից պատվիրած «Megic Mesh» ցանց վարագույրի և գովազդի ընթացքում դրա նկարագրության անհամապատասխանության վերաբերյալ	առևտուր	նշանակվել է տուգանք 51 055 դրամ
77	«Նոյան Տապան» ՍՊԸ բողոքը «Սկարլետ» ՍՊԸ արտադրած տետրերն իր արտադրած տետրերին շփոթության աստիճանի նման լինելու վերաբերյալ	առևտուր	կասեցվել է

h/h	Համառոտ նկարագրություն	Ոլորտ, շուկա, ապրանք, ծառայություն	Ընթացք/ավարտ
78	«FELIX» ապրանքանիշով հակասառիչ հեղուկ ներմուծող «Կրասկի Սեյսի» ՍՊԸ բողոքն առ այն, որ ՀՀ ներմուծվող այլ հակասառիչ հեղուկների պիտակների բովանդակությունը չի համապատասխանում տարայի պարունակությանը	հակասառիչ հեղուկ	տրվել է նախազգուշացում
79	«Գ.Գ.Գ. Մանուկյան» ՍՊԸ դիմումն իր գրանցած «Afrodita» և «Argo Neo» ապրանքային նշանները «Բրենդ Ֆաքթրի» ՍՊԸ-ի կողմից օգտագործելու վերաբերյալ	առևտուր	կասեցվել է
80	«Նոյան Տապան» ՍՊԸ բողոքը «Յալոնգ» ՍՊԸ դեմ առ այն, որ վերջինիս արտադրած տետրի տեսակը կրկնում է իր հեղինակային իրավունքով ամրագրված տետրի ֆունկցիոնալ բնութագրերը:	առևտուր	կարճվել է
81	ՀՀ կառավարությանը ենթակա սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի գրությունը լաբորատոր փորձաքննության արդյունքում «Լոռվա Կաթ» ՍՊԸ արտադրած «Թթվասեր 20%» արտադրանքը ճարպաթթվային կազմով (բուսական յուղի առկայությամբ) ՄՄ ՏԿ 021/2011 պահանջներին և ՄՄ ՏԿ 033/2013-ով սահմանված թթվասերի բնութագրին և անվանմանը չհամապատասխանելու վերաբերյալ	թթվասեր	վերսկսվել է վարչական վարույթը, նշանակվել է տուգանք 295 290 դրամ
82	ՀՀ կառավարությանը ենթակա սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի գրությունը լաբորատոր փորձաքննության արդյունքում ԱՁ Գ. Մանուկյանի արտադրած «Թթվասեր 18%» արտադրանքը ճարպաթթվային կազմով (բուսական յուղի առկայությամբ) ՄՄ ՏԿ 021/2011 պահանջներին և ՄՄ ՏԿ 033/2013-ով սահմանված թթվասերի բնութագրին և անվանմանը չհամապատասխանելու վերաբերյալ	թթվասեր	վերսկսվել է վարչական վարույթը, տրվել է նախազգուշացում
83	Iravunk.com կայքում հրապարակված «ՍԱՊԾ-ն «Աշտարակ կաթին» թույլ է տվել օրենք խախտել և անբարեխիղճ մրցակցություն ցուցաբերել» վերնագրով հոդվածի հիման վրա իրականացված հսկիչ գնման և դրա արդյունքում բացահայտված անբարեխիղճ մրցակցության դրսևորումների վերաբերյալ	թթվասեր	նշանակվել է տուգանք 2 384 338.93 դրամ
84	«Օմսկվինպրոմ» ՍՊԸ դիմումն առ այն, որ իր հեղինակային իրավունքները ՀՀ-ում խախտում է «Ալկո Իմպորտ Էքսպորտ» ՍՊԸ-ն՝ արտադրելով և իրացնելով «Օմսկվինպրոմ» ընկերությանը պատկանող «ПЯТЬ ОЗЕР» և «БЕЛАЯ БЕРЕЗКА» ապրանքային նշաններով օղիներին մոլորեցնելու չափ նման օղիներ	օղի	նշանակվել է տուգանք 16 207 000 դրամ
85	ՀՀ-ում «Procter & Gamble» ընկերության ներկայացուցիչը հանդիսացող «Արգե Բիզնես» ՍՊԸ դիմումն առ այն, որ «Head & Shoulders» ապրանքանիշի շամպունի փաթեթավորման վրա, որպես ներմուծող ընկերություն, նշված է իրենց անվանումը և իրավաբանական հասցեն	առևտուր	տրվել է նախազգուշացում
86	ԱՁ Ծ. Թանկուկյանի դիմումն իր գրանցած «COFFEE-INN» («Coffee-inn») ապրանքային նշանը մեկ այլ ԱՁ-ի կողմից օգտագործվելու վերաբերյալ	առևտուր	կարճվել է
87	«Արարատի կոնյակի գործարան» ՍՊԸ դիմում-բողոքն իր գրանցած ապրանքային նշանը «Գլանժ Ալկո» ՍՊԸ-ի կողմից օգտագործելու վերաբերյալ	ալկոհոլային խմիչքներ	տրվել է նախազգուշացում
88	«Ուոթերլոկ» ՍՊԸ դիմում-բողոքն առ այն, որ «Գանա Գրուպ Պլյուս» ՍՊԸ ապրանքների պիտակի վրա օգտագործվում են «Ուոթերլոկ» ՍՊԸ գրանցած «ԱՊԱՐԱՆ» ապրանքային նշանին շփոթության աստիճանի նման «ԱՊԱՐԱՆԻ» բառը	աղբյուրի ջուր	կարճվել է
89	«Ուոթերլոկ» ՍՊԸ դիմում-բողոքն առ այն, որ «Միեր» ՍՊԸ ապրանքների պիտակի վրա օգտագործվում են «Ուոթերլոկ» ՍՊԸ գրանցած «ԱՊԱՐԱՆ» ապրանքային նշանին շփոթության աստիճանի նման «ԱՊԱՐԱՆԻ» բառերը	աղբյուրի ջուր	կարճվել է
90	«Ալկո Իմպորտ Էքսպորտ» ՍՊԸ վարչական բողոքը ՀՀ ՄՊՊՀ 06.09.2019թ. թիվ 107-Ա որոշման դեմ	օղի	մերժվել է

h/h	Համառոտ նկարագրություն	Ոլորտ, շուկա, ապրանք, ծառայություն	Ընթացք/ավարտ
Պետական մարմինների հակամրցակցային գործողություններ			
91	«Վճարահաշվարկային կազմակերպությունների ասոցիացիա» ՀԿ ներկայացուցչի բողոքը ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017թ. հուլիսի 12-ի «Բաժանորդների կանխավճարային և հետվճարային հաշիվների համալրման, վերալիցքավորման քարտերի վաճառքի և հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների դիմաց վճարումների ընդունման մասին» թիվ 307-Ն որոշմամբ մրցակցային օրենսդրության դրույթները խախտվելու վերաբերյալ	վճարահաշվարկային ծառայությունների մատուցում	կարճվել է
92	«ՀՐԱՇՔ ԱՅԳԻ» ՍՊԸ բողոքը Գյուղատնտեսության նախարարության՝ թունանյութերի ձեռքբերման նպատակով հայտարարած մրցույթներում մրցակցության հնարավոր սահմանափակման վերաբերյալ	պետական գնումների շրջանակներում թունանյութի մատակարարում	կարճվել է
93	Գյուղատնտեսության նախարարության հայտարարած թունանյութերի ձեռքբերման գործընթացում մրցակցության հնարավոր սահմանափակման վերաբերյալ	պետական գնումների շրջանակներում թունանյութի մատակարարում	կարճվել է
94	«Ստանդարտ Դիալոգ» ՍՊԸ բողոքը «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» և «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ների գործունեության դեմ առ այն, որ վերջիններիս գործունեությունը կարող է սահմանափակել տնտեսական մրցակցությունը լաբորատոր փորձաքննությունների ծառայության մատուցման ոլորտում	լաբորատոր փորձաքննություն	կարճվել է
95	ԱՁ Գ. Այվազյանի դիմում-բողոքն առ այն, որ Դատական դեպարտամենտի հրապարակած ԴԴ-ԳՀՁԲ-19/07 ծածկագրով մրցույթի հրավերի տեխնիկական բնութագիրն անհավասար մրցակցային պայմաններ է ստեղծում մրցույթի մասնակիցների համար	պետական գնումներ	տրվել է նախազգուշացում
96	«Կոպի Սերվիս» ՍՊԸ դիմում-բողոքն առ այն, որ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-69/19 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերը պարունակում է «Կոպի Սերվիս» ընկերության մասնակցությունը տվյալ գնման ընթացակարգին սահմանափակող պայմաններ	պետական գնումներ	կարճվել է, տրվել է զգուշացում
Տեղեկատվության չտրամադրում կամ ժամկետից ուշ տրամադրում			
97	Պահանջված տեղեկատվությունը «Երկու ընկեր» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չներկայացնելու վերաբերյալ	ուղևորափոխադրումներ	տրվել է նախազգուշացում
98	Պահանջված տեղեկատվությունը «Գավա» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չներկայացնելու վերաբերյալ	ջրաչափեր	տրվել է նախազգուշացում
99	Պահանջված տեղեկատվությունը «Վի Ջի Սուպերմարկետ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չներկայացնելու վերաբերյալ	կոնֆետներ	տրվել է նախազգուշացում
100	Պահանջված տեղեկատվությունը «ՖՖԱ Ինվեստմենտ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չներկայացնելու վերաբերյալ	անշարժ գույքի վարձակալություն	տրվել է նախազգուշացում
101	Պահանջված տեղեկատվությունը «Հույս-96» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չներկայացնելու վերաբերյալ	վարձակալությամբ անշարժ գույքի տրամադրում	նշանակվել է տուգանք 200 000 դրամ
102	Պահանջված տեղեկատվությունը «Ալլիգատորս Պրոֆ Սեքյուրիթի» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չներկայացնելու վերաբերյալ	պահնորդական ծառայություն	տրվել է նախազգուշացում
103	Պահանջված տեղեկատվությունը «ՌԴ-Սեքյուրիթի» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չներկայացնելու վերաբերյալ	պահնորդական ծառայություն	տրվել է նախազգուշացում
104	Պահանջված տեղեկատվությունը «Մոբայլ Սենթր Արթ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չներկայացնելու վերաբերյալ	բջջային հեռախոսների իրացում	տրվել է նախազգուշացում
105	«ՄԴԿ» ՍՊԸ-ի կողմից պահանջվող տեղեկատվությունը սահմանված ժամկետում չներկայացնելու վերաբերյալ	բջջային հեռախոսներ	տրվել է նախազգուշացում

h/h	Համառոտ նկարագրություն	Ոլորտ, շուկա, ապրանք, ծառայություն	Ընթացք/ավարտ
106	Պահանջված տեղեկատվությունը «Տելեմարկետ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չներկայացնելու վերաբերյալ	առևտուր	տրվել է նախազգուշացում
107	Պահանջված տեղեկատվությունը «Ռոսնեֆտ-Արմենիա» ՓԲԸ-ի կողմից սահմանված ժամկետում չներկայացնելու վերաբերյալ	դիզելային վառելիքի շրջանառություն	տրվել է նախազգուշացում
108	Պահանջված տեղեկատվությունը ԱՁ Ա. Նիկոլյանի կողմից սահմանված ժամկետում չներկայացնելու վերաբերյալ	առևտուր	տրվել է նախազգուշացում
109	Պահանջված տեղեկատվությունը ԱՁ Հ. Զաքարյանի կողմից սահմանված ժամկետում չներկայացնելու վերաբերյալ	առևտուր	տրվել է նախազգուշացում
110	Պահանջված տեղեկատվությունը ԱՁ Ս. Ղազարյանի կողմից սահմանված ժամկետում չներկայացնելու վերաբերյալ	առևտուր	տրվել է նախազգուշացում
111	Պահանջված տեղեկատվությունը «Յալոնգ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չներկայացնելու վերաբերյալ	առևտուր	տրվել է նախազգուշացում
112	Պահանջված տեղեկատվությունը «ՄԱՊ» ՓԲԸ-ի կողմից սահմանված ժամկետում չներկայացնելու վերաբերյալ	կոնյակի շրջանառություն	տրվել է նախազգուշացում
113	Պահանջված տեղեկատվությունը «ՎԵԴԻ-ԱԼԿՈ» ՓԲԸ-ի կողմից սահմանված ժամկետում չներկայացնելու վերաբերյալ	կոնյակի շրջանառություն	նշանակվել է տուգանք 1 000 000 դրամ
114	Պահանջված տեղեկատվությունը «Իջևանի գինու, կոնյակի գործարան» ՓԲԸ-ի կողմից սահմանված ժամկետում չներկայացնելու վերաբերյալ	կոնյակի շրջանառություն	նշանակվել է տուգանք 1 000 000 դրամ
115	Պահանջված տեղեկատվությունը «Հայասի Գրուպ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չներկայացնելու վերաբերյալ	կոնյակի շրջանառություն	նշանակվել է տուգանք 2 000 000 դրամ
116	Պահանջված տեղեկատվությունը «Արարատի գինու գործարան» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չներկայացնելու վերաբերյալ	կոնյակի շրջանառություն	նշանակվել է տուգանք 1 000 000 դրամ
117	Պահանջված տեղեկատվությունը «Լույս Ինվեսթմենթս» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չներկայացնելու վերաբերյալ	կոնյակի շրջանառություն	նշանակվել է տուգանք 500 000 դրամ

© ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով, 2020